«Ինկոլ, մեռնեմ ջանիդ, ոտդ գազից չիանես» ասողներն ընտրելու են իրեն, իսկ նրանք, ովքեր զարմանում են այդ լկտի բառապաշարից, ընտրությունների չեն գնալու: Նիկոլ Փաշինյանն այնպես է անում, որ ցանկացած բարոյական մարդ ամոթ զգա քաղաքականության մասին խոսելիս, քանի որ քաղաքականությունը վերածել են պոռնոգրաֆիայի:

Կարդացեք՝ էջ 4

Կյանքը ցույց է տալիս, որ պարտված երկրները լքում են իրենց վասալներին: ԱՄՆ-ին Հայաստանը պետք էր որպես Իրանի դեմ ճնշման գործիք, հիմա այդ գործիքի անհրաժեշտությունը չկա: «Թրամփի ուղի» կոչվածը չի կարող գործարկվել՝ պարտվածների անունով ուղիներ չեն կոչվում, պարտվածները չեն կարող նոր նախագծեր իրագործել:

Կարդացեք՝ էջ 5

Չնայած կողմերի հակասական հայտարարություններին, փաստ է, որ հրադադարն ու բանակցությունները նվազեցնում են պատերազմի բեռը, որովհետեւ հազարավոր կյանքեր խլած պատերազմում հաղթողներ չեն լինում: Բայց Իրանի շուրջ իրավիճակը կարող է ազդել համաշխարհային իրավիճակի եւ հատկապես մեր տարածաշրջանի զարգացումների վրա:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 57 (4192), 9 ապրիլ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի փակվելուց շուրջ 2 տարի անց բժշկական հիմնարկի աշխատակազմը չի ստացել աշխատավարձերը. քաղաքապետարանը շուրջ կես տարվա աշխատավարձ է պարտք աշխատողներին: Ծննդատան նախկին աշխատակից՝ անեսթեզիոլոգ Հայկանդուխտ Գրիգորյանը երեկ մեզ հայտնեց, որ քաղաքապետարանը թեպետ օրեր առաջ խոստացել է վճարել, բայց այնքան են խաբել, որ այլեւս չեն հավատում եւ պատրաստվում են առաջիկայում կառավարության շենքի մոտ բողոքի ձայն բարձրացնել: Հիշեցնենք, որ ծննդատունը 2020 թվականից հանձնված է եղել հավատարմագրային կառավարչին: 2022-ից հավատարմագրային կառավարիչն իր պարտավորությունները չի կատարել, եւ Երեւանի քաղաքապետարանը սկսել է պայմանագրի խզման գործընթաց, ապա ընթացել է դատական գործընթաց, որն ավարտվել է 2024 թ. ապրիլի 29-ին: Ծննդատան վերահսկողությունը 2024 թ. մայիսի 1-ից անցել է քաղաքապետարանին, իսկ հուլիսի 14-ին առողջապահության նախարարի հրամանով կասեցվել է դրա գործունեությունը: Ի դեպ, քաղաքապետարանից դեռ 2 տարի առաջ վստահեցնում էին, որ ծննդատունը ժամանակավոր է փակվել, եւ այն անպայման վերաբացվելու է:

Օրերս մարզահամերգային համալիրում Փաշինյանի մասնակցությամբ 2 միջոցառում էր անցկացվել: Ապրիլի 4-ին մեծ դահլիճում տեղի ունեցավ ՔՊ համագումարը, երեկոյան, փոքր դահլիճում՝ Վարչաբենդի հանդեսը: Մարզահամերգայինի տնօրեն Կարեն Ղազարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ երկու դահլիճն էլ Փաշինյանի թիմին տրամադրվել է վարձակալությամբ: «Փոքր դահլիճի համար վճարել են 3 մլն դրամ, մեծ դահլիճի համար՝ 5 մլն»,- ասաց նա: Դիտարկմանը՝ բայց այլ քաղաքական ուժերին անհամեմատ ավելի բարձր գնով եք վարձակալության հանձնում, մեզ ասել են, որ մինչեւ 15 մլն դրամ է վարձավճարը, Ղազարյանն արձագանքեց. «Չկա նման բան, մենք բոլոր քաղաքական ուժերին նույն պայմաններն ենք առաջարկել, «Ուժեղ Հայաստան»-ին էլ էինք նույն գնով տվել, մյուսներին էլ»: «Հայաստան» դաշինքից մեզ ասացին, որ իրենք 6 միլիոն դրամ վճարել են փոքր դահլիճի համար, 15 միլիոն՝ մեծի: Նույն գներն են նշում նաեւ երաժիշտները: Հայ երգիչներից մեկի պրոդյուսերը մեզ հայտնեց, որ փոքր դահլիճի վարձակալության գումարը կազմում է 5-6 միլիոն դրամ՝ կախված սեզոնից, մեծինը՝ 10-15 միլիոն, իսկ Ֆոյեի՝ նախասրահի վարձակալության գները պարզել չհաջողվեց, քանի որ, բացի Փաշինյանից, այդ տարածքը ոչ մի քաղաքական ուժ չի վարձակալել:

Անօրեն ու խոցելի

Խելացի հասարակությունը թույլ չէր տա, որ այսպես մատների վրա իրեն խաղացնեին, պսպղուն խաղալիք ցույց տային՝ սերը նվաճեին: Խելացի հասարակությունը բազում հարցեր կբարձրացներ, կառարկեր եւ պրիմիտիվ գայթակղություններին կուլ չէր գնա: Օրինակ, կհարցներ՝ ինչպե՞ս եղավ, որ 1-2 տարի առաջ Սամվել Կարապետյանին գովաբանում էիր, ընդունում կառավարությունում, հետը զբոսնում «Մալիբուի» այգում, հիմա քո ատելությանն է արժանանում: Որովհետեւ համարձակվել է քո կարծիքից տարբերվող կարծիք հայտնել եւ մասնակցել քաղաքական պայքարին: Կհարցներ՝ գնում ես դպրոցներ, մանկապարտեզներ, երեխաների գլուխներն ես շոյում, դեռահասների հետ ես նկարվում, ժպտում, սիրաշահում, բա մի երեխա էլ քո հրահանգով բանտում հայտնված գերազանցիկ տղա է՝ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ, ապագա գիտնական կամ բժիշկ ու, հաստատ՝ իր երկրի լավ քաղաքացի: Կհարցներ՝ այնքան քիչ բան ես կառուցել մեր երկրում, որ գեթ մեկ գործարան չկա, որ այսօր այցելես՝ գնում ես մանկապարտեզներ ու դպրոցներ, առավելագույնը՝ ջերմոց, որտեղ մասնավոր անձինք մի քանի միլիոն դոլարի ներդրում են արել, փոքրիկ աջակցություն ստացել պետությունից, եւ դա առնվազն երկու անգամ ցուցադրում եք, մեկ նախարարդ է այցելում, մեկ՝ դու: Իսկ առավել բծախնդիր քաղաքացիները կհարցնեին՝ ինչպե՞ս է ստացվում, որ մանկապարտեզի խոհանոց դրսի շորերով ներխուժում ես, կաթսաները կեղտոտ ձեռքերով բացում- փակում, իսկ ջերմոց խալաթով ես մտնում: Եվ անպայման կհարցնեին՝ բավական չէ՞ նստես էկրանի առաջ ու անթույլատրելի լեքսիկոնով վիրավորես ողջ հանրությանը: Կարեւոր չէ, թե խոսքդ ում է ուղղված՝ քեզ զայրացրած օլիգարխի՞ն, թե՞ շարքային քաղաքացուն, դու ի՞նչ իրավունք ունես մարդուն սպառնալ, թե բոմժ կդարձնեմ, ես քեզ այդ իրավունքը տվե՞լ եմ:

Ըստ իրավապահ համակարգի մեր աղբյուրների, ոստիկանության պարեկներին հրահանգ է իջեցվել՝ գործարար Սամվել Կարապետյանի հետ կապված՝ շատ աչալուրջ լինել: Ոստիկանությանը պարտավորեցրել են հերթապահություն իրականացնել Կարապետյանի առաջնորդած ուժի կազմակերպած բոլոր ակցիաների, միջոցառումների ժամանակ եւ արձանագրել բոլոր ավտոմեքենաները, որոնք ժամանում են դեպքի վայր, ֆիքսել պետհամարանիշներն ու առիթ գտնել տուգանելու կամ տուգանային հրապարակ տանելու: Մեզ ասացին, որ պարեկներն ուղղակի զօրուգիշեր հերթապահում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակների հարեւանությամբ, նկարահանում, արձանագրում, տուգանում կուսակցության անդամներին տեղափոխող ավտոբուսների եւ սպրինտերների վարորդներին: Ավելի վաղ գրել էինք նաեւ, որ իշխանությունը Կարապետյանի գրասենյակների դիմաց ծպտված «ռազվեդչիկներ» էլ է կարգել, որ ելումուտ անող մարդկանց ֆիքսեն, գտնեն, փորձեն դուրս գալ նրանց հարազատների ու ընտանիքների վրա՝ վախեցնեն ու բացատրական աշխատանքներ տանեն նրանց հետ:

ՄԱՐԶՊԵՏՆԵՐԸ ԳՈՐԾԻ ԵՆ ԱՆՑԵԼ

Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, որ խաչակրաց արշավանք է հայտարարել մարզի դպրոցներում տարիներ շարունակ եղած փառքի անկյունների դեմ եւ անձամբ վերահսկում է դրանք հեռացնելու գործընթացը, ըստ մարզից ստացված տեղեկությունների՝ հընթացս սկսել է նաեւ նախընտրական ճնշումներ գործադրել դպրոցների եւ մանկապարտեզների տնօրենների նկատմամբ: Նրանցից մեկը մեզ պատմեց, որ մարզպետն իրենցից ցուցակներ է պահանջում, թե ովքեր են ՔՊ-ի պոտենցիալ ընտրողները եւ ովքեր՝ կասկածելիները: Ինքն անձամբ ստուգում է ցուցակները, ապա հրահանգավորում տնօրենին, որ լուծի այլախոհների «հարցը»՝ կամ նրանց դարձնի ՔՊ-ի ընտրող, կամ ազատի աշխատանքից: Պատմում են, որ ոմանք, վախից դրդված, ասում են, թե ՔՊ են ընտրելու, եւ ներկայացնում են, որ իրենց կոլեկտիվներում էլ բացառապես իշխանամետներ են հավաքված: Իսկ եթե որեւէ միամիտ խոստովանում է, որ իր կոլեկտիվում հակաիշխանական տարրեր կան, մարզպետն անձամբ է որոշումներ կայացնում:

ՍԱ ԴԵՌ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄԱՍՆ Է, ՊԱՏԿԵՐԱՑՐԵՔ, ԹԵ ԿՈՒԼԻՍՆԵՐՈՒՄ ԻՆՉ ՀՐԱՄԱՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ

*«Հրապարակի» զրուցակիցը նախկին դատախազ, փաստաբան **Ռաֆֆի Ասլանյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանն ակնհայտորեն ունի մտասեւեռումներ: Նա վերջին շրջանում նոր թիրախ է գտել՝ իր հրահանգով կալանավորված ու հետապնդվող Սամվել Կարապետյանը: Երեկ էլ վաղ առավոտյան ֆեյսբուքյան լայվի ժամանակ հայտարարեց, որ Սամվել Կարապետյանին բոմժ է դարձնելու: Ըստ Ձեզ՝ սա ինչ է, ինչպես կարող է իրավական երկրի ղեկավարը նման լեքսիկոն կիրառել, նման սպառնալիքներ հնչեցնել, ինչ է նշանակում՝ ընտրություններում առաջադրվող գլխավոր մրցակցին դարձնել բոմժ, բա իրավունքն ու օրինականությունը որտեղ մնացին:

- Յուրաքանչյուր ողջամիտ քաղաքացի պետք է մեկընդմիշտ հասկանա մի բան՝ մենք իրավական պետություն չունենք, սա ֆիքսենք մեկընդմիշտ: Հայաստանի վարչապետը հոգեբանորեն եւ հոգեպես ծայրահեղ անկայուն մարդ է: Նյարդային պահերին նա իր բոլոր դավադիր նպատակները միանգամից բացահայտում է: Առաջ էլ սպառնում էր նույն Կարապետյանին, ասելով՝ տես, քեզ ինչ եմ անելու, արա, չուլանից դուրս արի եւ այլն: Սա դեռ հրապարակային մասն է, Դուք պատկերացրեք, թե կուլիսներում ինչ հրամաններ է տալիս եւ ինչերով է զբաղվում: Ցավալին այն է, որ հասարակության մեջ դեռ կան մարդիկ, ովքեր կարծում են, որ Փաշինյանը չի միջամտում իրավական պրոցեսներին եւ քաղաքական ռեպրեսիաներով չի զբաղվում: Մեր հասարակության մի մասը ցավալիորեն մոլորության մեջ է: Դեռ մի կողմ թողնենք նրանց, ովքեր լավ էլ հասկանում են, թե ինչ է կատարվում, ուղղակի իրենց լափի դարդին են, բայց մոլորյալների մասով պետք է ասենք, որ նրանք ունեն որոշակի խնդիրներ՝ կրթվածության առումով:

- Տպավորություն է, որ Փաշինյանը վախեցնում է հասարակությանը: 18-ամյա պատանուն կալանքի տանելը հենց դրա մասին է վկայում: Ի դեպ, իշխանական շրջանակները պնդում են, որ աջակցելով այդ երիտասարդին՝ ընդդիմությունը, մենք՝ բոլորս, արդարացնում ենք բռնությունը, սակայն այդ գործով չկա որեւէ տուժող, չկա բռնության ակտ, հետեւաբար, ինչ բռնության մասին կարող է խոսք լինել:

- Բռնության դեպք ընդհանրապես չկա, անգամ նվազագույն կասկածի շեմը հաղթահարված չէ. դա՝ մի կողմ: Այստեղ ցանկացած հանցակազմ կարելի էր մեղսագրել, սակայն ոչ քաղաքական միջամտություն: Մենք պետք է այստեղ տեսնենք կալանքի հիմքեր, սակայն ո՞րն է հիմքը՝ 18-ամյա երիտասարդին կալանավորելու, բացառապես Փաշինյանի վախը: Նա ամեն ինչ անում է վերարտադրվելու համար, քանի որ գիտակցում է իր չվերարտադրվելու հետեւանքները: Դա եւ Փաշինյանն է հասկանում, եւ իր թիմի կարկառուն ներկայացուցիչները: Նրանք գիտեն, թե ինչ է սպասվում իրենց, եթե չվերարտադրվեն: Մարդը ամենալավն է հասկանում, թե ինչ վատություններ է արել ինքը թե՛ պետությանը, թե՛ մարդկությանը: Այս մարդիկ մեզնից՝ բոլորից լավ գիտեն, թե ինչ են բերել մեր երկրի գլխին: Չպետք է զարմանաք, որ ամեն ինչ անում են վերարտադրվելու համար: Ամուսնալուծություն բեմադրելով, տարբեր անձանց կալանքի տանելով՝ այս մարդիկ փորձելու են վերարտադրվել:

- Իսկ ինչ է սպասվում նրանց:

- Առնվազն քրեական պատասխանատվություն: Եթե գա նորմալ իշխանություն, որը երկիրը հաշվեհարդարի չվերածի, ապա քրեական պատասխանատվությունը լինելու է պարտադիր պայման: Ճիշտը ես կարծում եմ, որ դա կլինի:

- Առավոտյան տեղեկացանք, որ կալանավորել են Գալուստ Սահակյանի որդուն՝ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանին: Հենց իր հոր ծննդյան օրը նույն քրեական վարույթով ձերբակալվել է նաեւ սոցիալական հարցերի նախկին նախարար Արտեմ Ասատրյանը: Ինչ նախադեպ է սա, երբ տարիներ առաջ հարուցված, մոռացված գործերը փորձում են այժմ կենդանացնել եւ ընտրությունների շեմին մարդկանց ձերբակալում են կամ կալանավորում:

- Որքանով ես գիտեմ, 2019 թվականից սեյֆում գցած մի գործ է սա, որը մոռացվել էր, սակայն Փաշինյանը շոու է իրականացնում՝ չխնայելով ոչ մի բան:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԹՐԵՍԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ 300 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

2024 թվականի ապրիլի 24-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, եւ նրա կրտսեր դուստրն այցելել էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այն պահին, երբ անմար կրակի մոտ էին եղել Ազգային ժողովրդավարական բեւեռի ներկայացուցիչները: Վարչապետի կնոջը տեսնելով՝ նրանք սկսել էին վանկարկել. «Նիկոլ, դավաճան», «Նիկոլ, ցեղասպան», «Նիկոլ, հողատու» եւ այլն: Միջադեպից անմիջապես հետո 7 անձ ձերբակալվել էր, նրանց մեղադրանք էր առաջադրվել Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ «Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք», որը 1-4 տարի ազատազրկում է նախատեսում: Քննիչները գտել էին, որ այդ վանկարկումը սթրես եւ հոգեկան տառապանք են պատճառել տիկին Հակոբյանին եւ նրա դստերը:

Գործը քննվում էր Քննչական կոմիտեում, ԱԺԲ-ականներին պարբերաբար կանչում էին հարցաքննությունների, սակայն այդպես էլ Քննչական կոմիտեն 2 տարի քննելուց հետո չի կարողացել ավարտել նախաքննությունը: Քրգործից անջատվել է Ազգային ժողովրդավարական բեւեռի անդամ՝ 70-ամյա Տիգրան Դերմոյանի մասը, նախաքննության ավարտ են հայտարարել եւ մասն ուղարկել դատարան՝ քննելու, իսկ մայր գործի նախաքննությունը շարունակվում է:

Առաջին ատյանի դատարանի որոշմամբ, Դերմոյանը մեղավոր է ճանաչվել, նրա նկատմամբ կիրառվել է 375 հազար դրամի տուգանք: Որոշումը կողմերը բողոքարկել են վերաքննիչ քրեական դատարան, վերաքննիչն առաջին ատյանի որոշումը մեղմացրել է՝ 375 հազար դրամ տուգանքի փոխարեն նշանակել է 300 հազար դրամի չափով տուգանք: Դերմոյանի պաշտպան **Արայիկ Պապիկյանը** «Հրապարակ»-ին ասաց, որ վերաքննիչի այս որոշումը եւս ինքը եւ դատախազը բողոքարկել են վճռաբեկ դատարան. «Մենք արդարացում ենք պահանջում, իսկ դատախազը պահանջում է նոր քննություն կամ ըստ արարքի՝ պատիժ, դեռ լուր չունենք՝ ընդունվե՞լ է վարույթ, թե՝ չէ: Ես միայն գիտեմ, որ մայր գործի քննությունը շարունակվում է, կարծում եմ՝ իրենք սպասում են, որ այստեղով վերջնական դատավճիռ լինի, իրենք դա վերցնեն, դնեն գործի մեջ, որից հետո ակտիվ գործողություններ կանեն: Օրինակ, կարող են ընտրություններից առաջ տեսնեն՝ ցուցակում իրենց անհարմար մարդ կա՞, մի քրեական գործով ծանրաբեռնեն, կարողանան օգտագործել»:

Ինչո՞ւ է հենց Դերմոյանի դրվագն առանձնացվել: Պապիկյանն ասում է, որ չի կարող այդ հարցին պատասխանել, ինքն էլ չգիտի. «Ընդ որում, 10 րոպեանոց վիդեոյում, որը ներկայացվել է դատարանին, Դերմոյանը լուռ կանգնած է, ոչինչ չի անում, չի վանկարկում»: Պաշտպանի խոսքով՝ Աննա Հակոբյանը եւ դուստրը տուժող չեն ճանաչվել, որեւէ կարգավիճակ չունեն, սակայն քրեական վարույթը նախաձեռնվել է նրանց պաշտպանելու համար: Նշենք, որ նույն հոդվածով (ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք տարածելուն) քրեական վարույթ էր նախաձեռնվել թատերագիր, սցենարիստ, գրող Վահրամ Սահակյանի նկատմամբ:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Շտապում էր Տավուշի հողերը տալ, իսկ մեր հողերը ե՞րբ ենք ստանալու

Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հարցերով հանձնաժողովները 2024 թվականի ապրիլի 19-ին պայմանավորվեցին սահմանազատումը սկսել Տավուշի մարզից: Հայտարարվեց, որ սահմանագծի տվյալ հատվածների նկարագրությունը կազմվելու է՝ հաշվի առնելով տեղանքում գեոդեզիական չափումների արդյունքում կատարված կոորդինատների հստակեցումը, որը պետք է ավարտվի մինչեւ 2024 թ. մայիսի 15-ը: Վարչապետի աշխատակազմից էլ հայտարարեցին, որ Ադրբեջանն այս ամենի արդյունքում 2.5 գյուղ է ստանում, որոնք իբրեւ թե ինչ-որ ժամանակ պատկանել են Ադրբեջանին, բայց այդպես էլ չասվեց, թե որ թվականների քարտեզով է կատարվում այդ սահմանազատումը եւ հետագա սահմանազատումն ինչ քարտեզով է իրականացվելու: Միայն Նիկոլ Փաշինյանը սպառնաց, որ եթե այս տարածքները չհանձնենք, հաջորդ շաբաթ պատերազմ կսկսվի, եւ սպառնալիքներով, ուժով, կամային որոշմամբ հանձնեցին Կիրանցի հողերի կեսը:

Փաշինյանը Տավուշի սահմանազատման օպերացիան «փայլուն» կատարեց՝ հօգուտ Ադրբեջանի, հայտարարեց, որ երբեք տավուշցին այսքան անվտանգ չի ապրել՝ Կիրանցի պատը հայտարարեց «անվտանգության երաշխավոր», որից այս կողմ հավքն իր թեւով, օձն իր պորտով չեն կարող անցնել: Ասաց նաեւ, որ հաջորդ սահմանազատումը կլինի Սյունիքի մարզում: Իսկ 2020 թվականից հետո Սյունիքի մարզում ադրբեջանցիները որոշ հատվածներում, օրինակ՝ Տեղ գյուղում, Ներքին հանդում, առաջ են եկել՝ ներխուժելով հայկական տարածք:

Վերջերս Փաշինյանը Սյունիքի մարզ կատարած այցի ժամանակ, Շաքիի ջրվեժի հարակից տարածքում իր շուրջ էր հավաքել Սիսիանի ավագ դպրոցի աշակերտներին եւ պատմում էր, որ Սյունիքի սահմանամերձ համայնքներում բնակիչները մոտենում, հարցնում են. «Հույս կա՞, որ մեզ մոտ էլ սահմանազատում կլինի»: Իբր սահմանազատումն այնքան լավ բան է, որ բոլոր մարզերում երազում են, որ լինի, իրենց տարածքներից էլ հող հանձնեն թշնամուն: Փաշինյանի այս հայտարարությունից հետո ՔՊ-ական պատգամավորները, իրար հերթ չտալով, ասում էին, որ Սյունիքի մարզում քաղաքացիներն իրենց հարցնում են՝ ե՞րբ եք այստեղ սահմանազատում անելու: Այդ ժամանակ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը նշել էր, որ սյունեցիները սպասում են, որ Տեղ գյուղի հատվածում առաջխաղացում գրանցած Ադրբեջանի զինված ուժերը հետ կգնան Հայաստանի սուվերեն տարածքից:

Այս խոսակցություններից 2 տարի է անցել, սակայն Սյունիքի մարզում սահմանազատման գործընթաց չի սկսվել: Երբ հարցը Հայաստանի սուվերեն տարածքին է վերաբերում, Փաշինյանը չի շտապում, ինչպես շտապում էր Տավուշում, որ արագ հանձնի հողերը:

Մենք գրավոր հարցում էինք ուղարկել Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին. Սյունիքի մարզ կատարած այցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ Տավուշից հետո սահմանազատման աշխատանքները տեղի են ունենալու Սյունիքի մարզում, ինչ աշխատանքներ են իրականացվում:

Մեզ պատասխանել են. «Սյունիքի մարզում սահմանազատման առնչությամբ այս պահին մեզ որեւէ տվյալ հայտնի չէ, գործընթացի վերաբերյալ մանրամասների համար խնդրում ենք դիմել իրավասու պետական մարմիններին»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ինչ են ցվիրել Փաշինյանի պատվիրակությանը ՌԴ-ում

Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Մոսկվա բուռն քննարկումների տեղիք տվեց: Այն աննախադեպ էր ոչ միայն նրանով, որ Հումորի եւ հիմարների օրը՝ ապրիլի 1-ին էր Վլադիմիր Պուտինը նրան հրավիրել Մոսկվա, այլ նաեւ այն կոշտ խոսակցությամբ, որն ամբողջությամբ ուղիղ եթեր հեռարձակվեց, եւ շատերը հասկացան, որ երկու երկրների միջեւ հարաբերությունների լարում կա, եւ Պուտինն արդեն ուղիղ տեքստով մեսիջներ է հղում հայ հասարակությանը՝ Արցախի, Հայաստանում կայանալիք ընտրությունների, Եվրամիություն գնալու, երկաթուղու եւ ատոմակայանի ճակատագրի հետ կապված: Այցի շրջանակներում ոչ միայն ընդլայնված կազմով հանդիպում կայացավ հայկական պատվիրակության եւ ռուսական կողմի միջեւ, այլեւ դրան հաջորդեց մոտ 2 ժամանոց առանձնազրույց՝ փակ դռների ետեւում, որը, ըստ որոշ տեղեկությունների, կրկին հարթ չի անցել՝ կոշտ խոսակցություն է ընթացել: Մենք տեղեկացանք, որ, այնուամենայնիվ, ռուսական կողմը նաեւ բարեկրթության ժեստեր է արել՝ ուղղված Հայաստանից ժամանած պատվիրակությանը: Մասնավորապես, այցից հետո ԱԳՆ պետական արարողակարգային ծառայության պետ Գագիկ Վանոյանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին է ներկայացրել այն նվերները, որոնք պատվիրակությունը ստացել է Մոսկվայում: Ըստ այդմ, հաշվառման է ներկայացրել փայտե տուփ, որը պարունակում է 3 շիշ գինի, 1 շիշ օղի, 1 շիշ կոնյակ, 4 տուփ պանրի տեսականի, 3 հատ երշիկի տեսականի, 1 հատ պաշտետ, 3 տուփ ծխեցված ձկան տեսականի, 1 ապակյա տարա կրաբի ձողիկներ, 1 ապակյա տարա կարմիր ձկնկիթ եւ 1 տարա սեւ ձկնկիթ: Նվերը հայկական կողմին հանձնել է ՌԴ նախագահի արարողակարգի ղեկավար Վլադիսլավ Կիտաեւը: Սեթի ընդհանուր արժեքը կազմել է 336 հազար 500 դրամ: Հիշեցնենք, որ սա օրենքի պահանջն է՝ թանկարժեք նվերները պետք է հաշվառվեն եւ ներկայացվեն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ԻՐԱՆԻ ՉՊԱՐՏՎԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ Է ՓՈԽԵԼՈՒ

ՄԱՏԻՆ

Իրան-ԱՄՆ պատերազմի մեկնարկից մոտ մեկուկես ամիս անց, նախօրեին լարվածության պիկին, երբ նույնիսկ միջուկային հարձակումն էր շատ մոտ, կողմերը եկան համաձայնության՝ երկշաբաթյա հրադադարի շուրջ բանակցություններ սկսել՝ ուրբաթ օրվանից: Բանակցությունների մասին հայտարարությունը հաջորդեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի այն խոսքերին, որ նա առայժմ հետաձգում է իրանական քաղաքակրթությանը վերջ դնելու սպառնալիքի իրականացումը եւ երկու շաբաթով կասեցնում է հարձակումները մեր հարեւան երկրի վրա: Թրամփն իր Truth Social-ի հայտարարության մեջ նշել էր, որ ԱՄՆ-ն արդեն հասել եւ գերազանցել է իր բոլոր ռազմական նպատակները եւ շատ մոտ է Իրանի հետ երկարատեւ խաղաղության վերջնական համաձայնագրին: Նա հայտնել էր նաեւ, որ ԱՄՆ-ն Իրանից ստացել է 10 կետից բաղկացած առաջարկ եւ հավատում է, որ դա բանակցությունների համար պիտանի հիմք է: Ըստ նրա՝ ԱՄՆ-ն եւ Իրանը համաձայնության են եկել գրեթե բոլոր վիճելի հարցերի շուրջ, եւ երկշաբաթյա ժամկետը թույլ կտա վերջնական տեսքի բերել ու կնքել համաձայնագիրը: Իրականում, շատերը սա գնահատեցին որպես Իրանի հաղթանակ, իսկ Թրամփի խոսքերը՝ ընդամենը իր դեմքը փրկելու փորձ:

Բանակցությունները դեռ չեն սկսվել, սակայն վերլուծաբանները շտապում են ազդարարել Իրանի հաղթանակի մասին կամ առնվազն արձանագրում են, որ Իրանը դիմադրեց եւ պարտություն չկրեց: Երեկվանից հայ քաղաքական եւ քաղաքագիտական շրջանակներն էլ են կանխատեսումներ անում, թե ինչպես կանդրադառնա Իրան-ԱՄՆ երկարատեւ խաղաղության կնքումը տարածաշրջանի եւ հատկապես Հայաստանի վրա: Հավաքական կարծիքն այն է, որ Նիկոլ Փաշինյանն այդպիսով կորցնելու է քաղաքական հետաքրքրությունն Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի համար եւ կրկին աշխարհաքաղաքական «բոմժ» է դառնալու՝ փորձելով նոր տերեր գտնել:

Փորձառու դիվանագետ, ԱԳՆ նախկին գլխավոր քարտուղար **Վահագն Մելիքյանը** չի ուզում անշնորհակալ գործով զբաղվել եւ կանխատեսումներ անել, քանի դեռ բանակցությունների արդյունքները հայտնի չեն: Այդուհանդերձ, դրական է գնահատում հրադադարը. «Ամեն ինչ կախված է բանակցությունների արդյունքից, քանի որ դիվանագիտությունն աշխատում է, բանակցություններ են լինելու, դա արդեն իսկ լավ է, մնացած բոլոր կանխատեսումների մասին հնարավոր է խոսել բանակցություններից հետո: Մի բան փաստ է, որ Իրանն ավելի քան դիմադրեց, եւ ներքին միասնության շնորհիվ մարդիկ կարողացան համախմբվել նման ճգնաժամային իրավիճակներում: Իրականում, այս պատերազմը պետք է բլից-կրիգ լիներ եւ ստեղծեր ներքին անհամերաշխության մթնոլորտ, ու ներքին պառակտվածության միջոցով հասնեին հաղթանակի, բայց դա տեղի չունեցավ, որովհետեւ Իրանի ժողովրդին հաջողվեց միավորվել եւ տապալել ԱՄՆ ծրագրերը»:

Մինչդեռ քաղաքական գործիչները չեն սպասում բանակցությունների ավարտին եւ իրենց գնահատականներն են ներկայացնում, ՀԱԿ փոխնախագահ **Լեւոն Զուրաբյանը** կարծում է. «Եթե այս ամենն իրողություն դառնա, կարելի է ասել, որ Իրանը պատմական հաղթանակ է տարել՝ դիմակայելով երկու միջուկային տերությունների ռազմական հարձակմանը, քանի որ Թրամփը համաձայնել է ընդունել Իրանի պայմաններով ձեւավորված 10 կետանոց փաստաթուղթը՝ որպես բանակցությունների հիմք»: Ըստ Զուրաբյանի, սա ամբողջությամբ փոխում է մեր տարածաշրջանի ճարտարապետությունը եւ հաստատում Իրանին որպես տարածաշրջանային հզոր տերություն եւ, հաշվի առնելով նրա վերահսկողությունը Հորմուզի նեղուցի նկատմամբ, նաեւ որպես համաշխարհային մեծ խաղացող:

Նիկոլ Փաշինյանի նախկին թիմակից **Հովիկ Աղազարյանի** գնահատմամբ, Իրանի չպարտվելն իսկ մեզ համար դրական ազդեցություն է ունենալու, քանի որ Թրամփի ուղին թղթի վրա հիշողություն է մնալու. «Համենայնդեպս, այս տարբերակով, որի շուրջ համաձայնություն է կայացվել, կյանքի չի կոչվելու կամ պետք է պայմանագրից հանվի այն կետը, որով ասվում է, որ կողմերը կարող են իրենց մասնաբաժինը երրորդ կողմին հանձնել, կամ պետք է ստորագրվի նոր համաձայնություն, եւ ծրագրին երկու կողմերից բացի մաս կազմեն Իրանը, Թուրքիան, Ադրբեջանը եւ Ռուսաստանը: Եթե այդ կետը մնա, Հայաստանն այլեւս Իրանին չի կարող համոզել, որ խոսքը տնտեսական ծրագրի մասին է»: Իրանի ոչ թե հաղթանակի, այլ չպարտվելու դեպքում անգամ, ըստ Աղազարյանի, Հայաստանը կորցնելու է նաեւ քաղաքական հետաքրքրությունն Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի համար. «Որովհետեւ բոլորիս է հայտնի, որ թե՛ Արեւմուտքը, թե՛ ԱՄՆ-ն մեզնով հետաքրքրված են միայն նրա համար, որ մեկ՝ Ռուսաստանին դուրս մղեն տարածաշրջանից, մեկ՝ Իրանի դեմ օգտագործեն, հետեւաբար, եթե այդ խնդիրներն այլեւս հնարավոր չէ իրականացնել, ուրեմն մենք ինքնըստինքյան կորցնում ենք հետաքրքրությունը»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍԿՍԵԼ Է ՋԵՐՄՈՑ ԱՌ ՋԵՐՄՈՑ ԱՅՑԵԼԵԼ

Երեկ տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանն այցելել է Նոր Հաճն համայնքի Նոր Գեղի բնակավայրում գտնվող «Նուվո վիլաժ» ընկերություն: «Նուվո վիլաժ» ՍՊԸ-ն հիմնել է 5,2 հեկտար պղպեղի ջերմատուն: Հաղորդագրության մեջ նշված է. «Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի շրջանակում կառավարությունն օժանդակել է մասնավորի կողմից 5.2 հա մակերեսով պղպեղի ջերմատան հիմնմանը: Ծրագիրն իրականացվել է շուրջ 2 մլրդ 640 մլն դրամ վարկային միջոցներով, որից վարկի ամբողջական տոկոսի սուբսիդավորումը կազմել է 10 %»:

Մենք փորձեցինք պարզել, թե սա ինչ ընկերություն է, եւ ինչով է պղպեղի ջերմոցն արժանացել վարչապետի ուշադրությանը: «Հրապարակի» աղբյուրները նշեցին, որ 5,2 հեկտար այս հողատարածքը «Նուվո վիլաժ» ընկերությունը ձեռք է բերել 150 անձից՝ մեծ դժվարությամբ: Կտոր-կտոր՝ յուրաքանչյուր բնակչի հետ բանակցելով: Համայնքի բնակիչները մեզ պատմեցին, որ 2 տարի ընկերության ներկայացուցիչները դռնեդուռ են ընկել, համոզել սեփականատերերին, որ հողերն իրենց վաճառեն: Իսկ նման դեպքերում սեփականատերերը, որպես կանոն, գիտակցելով, որ գնորդն ուրիշ ճար չունի, սկսում են գին կրակել: Եվ ջերմոցը հիմնելու նպատակը գլուխ բերելու համար ընկերությունն անգամ չարդարացված բարձր գին առաջարկողներից է գնել նրանց հողերը: Ընկերությունը պետական գրանցում ստացել է 2023թ. մայիսի 30-ին: Մի անգամ արդեն այս ջերմոցի բացումը լուսաբանվել եւ գովազդվել է՝ 2024 թ. դեկտեմբերի 23-ին էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Նուվո վիլաժ» ջերմատնային տնտեսության բացումը: Նախագծի ընդհանուր արժեքը կազմել է մոտ 9 միլիոն եվրո: Պետությունը սուբսիդավորում է վարկի տոկոսները՝ 10 տոկոսային կետի չափով, ինչպես նաեւ սահմանվել է վարկի տոկոսադրույքի համար արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը 12 ամիս:

Ի դեպ, ընկերության արտահանման գլխավոր ուղղությունը Ռուսաստանն է: Միայն նախորդ տարի արտահանվել է ավելի քան 15 հազար տոննա պղպեղ: Ընկերության բաժնետոմսերի 51 %-ը պատկանում է Գենադի Վահրադյանին, 49%-ը՝ Աշոտ Ավագյանին: Այս անձանց մասին բաց աղբյուրներում տեղեկատվություն չհայտնաբերեցինք:

Հատկանշական է, որ ընկերության ներկայացուցիչը Նիկոլ Փաշինյանի հետ զրույցում ասաց, որ իրենք նախկինում նման բիզնեսով չեն զբաղվել: Հարց է առաջանում, թե ինչ երաշխիքով են 5.2 հա հող ձեռք բերել ու ներդրում արել, եւ ինչ նախադրյալներ է ունեցել կառավարությունը՝ այս նորաստեղծ ընկերությանը սուբսիդավորելու համար: Մենք կապ հաստատեցինք ընկերության ներկայացուցիչների հետ, որպեսզի պարզենք՝ արդյոք հրավեր եղե՞լ է, թե՞ Փաշինյանն է ցանկություն հայտնել այցելել նրանց, սակայն մեր հարցերին չցանկացան պատասխանել: Աշխատակիցն ասաց, որ իրավասություն չունի նման հարցերի պատասխանելու:

Նկատենք, որ այնքան են նվազել Հայաստանում ներդրումները, որ ամեն մի 9 միլիոն դոլարի ներդրումը հպարտության առարկա եւ մի քանի անգամ բացում անելու, լուսաբանելու ու գովազդելու առիթ է դառնում:

Նյութերը՝ Արմինե ՆԱՎՈՅԱՆԻ

ԿԱՐԾԻՔ

«Հրապարակի» զրուցակիցը հասարակական-քաղաքական գործիչ **Միքայել Նահապետյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը 2021-ի ընտրություններից առաջ խոստանում էր վերադարձնել նախկինների թալանը, այժմ էլ խոստանում է Սամվել Կարապետյանին դարձնել բոմժ: Սահմանադրության մեջ այնուամենայնիվ գրված է, որ Հայաստանն իրավական պետություն է, ինչ եք կարծում՝ իրավական պետության ղեկավարը կարո՞ղ է նման բառամթերքով խոսել որեւէ քաղաքական ուժի մասին:

ԱՌԱՋ ԹԱԼԱՆՆ ԱՐԵԼ ԵՆ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆ ԱՊՐԵԼ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՆԻԿՈԼՆ ԱՊՐՈՒՄ Է ՀԻՄԱ՝ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ

- Հայաստանը հաստատապես իրավական պետություն չէ: Նիկոլ Փաշինյանը Սահմանադրության ոՐ կետն է հաշվի առնում, որ դա հաշվի առնի: Նիկոլ Փաշինյանը որեւէ կապ չունի ՀՀ սահմանադրության հետ: Նա միահեծան, ավտորիտար առաջնորդ է, որն ինչպես ցանկանում է, այդպես էլ վարվում է, խոսում է այնպես, ինչպես ուզում է, եւ իրեն որեւէ բան հետաքրքիր չէ՝ օրենքից սկսած, երկրի տնտեսական, ֆինանսական վիճակով վերջացրած: Նրան հետաքրքրում է բացառապես այն, ինչը չի հակասում իր իշխանությունը պահպանելուն: Որ պահին հակասի, այս մարդու համար առաջնայինն իր իշխանությունն է: Յուրաքանչյուր թագավոր նախեւառաջ պարտավոր է մտածել իր թագավորական աթոռը պաշտպանելու մասին, սա թագավորական կառավարման մոդելում դարերից եկած ճշմարտություն է: Թագավորները մտածում են միայն իրենց պահելու մասին, հետո նոր կերեւա, թե ինչը պահել:

- Իսկ այն, որ նախկինները թալանել են, Ալեքսանդր՝ Սաշիկ Սարգսյանը՝ Սերժ Սարգսյանի եղբայրն ամեն տեղ 50-50 փայ է մտնում եւ այլն, պնդում էր, որ երկիրն ավերել են նախկինները եւ այլն: Կարողացե՞լ է այդ թալանը հետ բերել, որ հիմա էլ անցել է Սամվել Կարապետյանին, որ ո՛չ Հայաստանում է հարստացել, ո՛չ հայերի հաշվին...

- Ինչ-որ բաներ դատարանի վճիռներով իբրեւ փորձել են վերադարձնել, ինչ-որ բաներ էլ, այսպես թե այնպես, հետ չէին կարող գալ.... Ես եւ իմ ընկերներն առաջարկում էինք, որ այդ պրոցեսները տեղի ունենան հաշտությամբ, կոմպրոմիսներով եւ այլն, բայց Նիկոլին փողը չէր պետք, նրան պետք էր փողի շուրջ ձեւավորված աղմուկը եւ ներքին թշնամու կերպարի ստեղծումը: Այդ պատճառով էլ նա խնդիրը փորձել է լուծել հնչեղ, այլ ոչ թե արդյունավետ լուծման ճանապարհով: Ինչ վերաբերում է բուն հարցի էությանը, ապա այն անունները, որոնք հնչեցնում են որպես թալանչիներ, այդ թալանն արել են, որպեսզի կարողանան ապրել այնպես, ինչպես Նիկոլն ապրում է հիմա՝ պետական բյուջեի հաշվին: Դրանք բնույթով տարբեր, առանձին երկու ծայրահեղ լկտիություններ են:

- Իսկ ինչ կասեք Փաշինյանի օրեցօր լկտիացող բառապաշարի մասին, արդյո՞ք այն չի վնասում հենց իր վարկանիշին:

- Նրա էլեկտորատը սիրում է դա, իսկ մնացածը՝ ուղղակի այնքան են զզվում այդ ամենից, որ անգամ չեն ցանկանում ընտրությունների գնալ: Արդյունքում՝ նախորդ ընտրություններին մասնակցությունը ցածր եղավ, եւ Նիկոլը հաղթեց ընտրություններում: Տեխնոլոգիական տեսանկյունից նա չի սխալվում, զզվանք է հարուցում մտածված, արդյունքում՝ «Նիկոլ, մեռնեմ ջանիդ, ոտդ գազից չհանես» ասողներն ընտրելու են իրեն, իսկ նրանք, ովքեր զարմանում են այդ լկտի բառապաշարից, պարզապես ընտրությունների չեն գնալու, եւ ակնհայտ է, թե ինչ է լինելու: Նիկոլ Փաշինյանն այնպես է անում, որ ցանկացած բարոյական մարդ ամոթ զգա քաղաքականության մասին խոսելիս, քանի որ քաղաքականությունը վերածել են պոռնոգրաֆիայի: Բարոյական մարդիկ սկսում են անգամ ԱԺ նիստերը եւ քաղաքական լուրերը չնայել....

- Այսինքն՝ Փաշինյանը խնդիր է դրել, որ ընտրություններին քիչ թվով մարդիկ մասնակցեն:

- Այո, իհարկե, քանի որ այդ պարագայում ինքը կարող է հաղթել: Նրա էլեկտորատի համար այժմ ամենակարեւոր բանը հունիսի 7-ին ընտրատեղամաս գնալն է: Անգամ իրենց հանգուցյալներին անթաղ կթողնեն, բայց կգնան, Նիկոլ կընտրեն: Նրանց տեսանկյունից Նիկոլի լինել-չլինելը գոյաբանական հարց է:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Դասախոսը պահանջում է իրենց ազատել «բանտարկությունից»

Իջեւանի պետական քոլեջի երկարամյա դասախոս, գրող, լրագրող Զավեն Ալավերդյանը ֆեյսբուքյան իր էջում բաց նամակ է գրել՝ ուղղված ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանին. «Հայտնում եմ, որ Տավուշի Պ. Տէվեճեան տարածաշրջանային քոլեջ-հիմնադրամի տնօրինությունը, ի հեճուկս մի շարք ողջամիտ մարդկանց հորդորներին, դասերի ընթացքում փակում է քոլեջի բոլոր ելքերը՝ շուրջ 350 ուսանողներին եւ 80 աշխատակիցներին թողնելով արտակարգ իրավիճակների վտանգի տակ՝ հրդեհ, երկրաշարժ եւ այլն: Խնդրում եմ ձեռք առնել համապատասխան միջոցառումներ՝ այս վտանգավոր իրավիճակն ի չիք դարձնելու եւ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Հարգանոք՝ ՀՀ ժուռնալիստների, Համահայկական եւ ԱՄՆ հայ գրողների միություններ-ի անդամ, դասախոս Զ. Ա. Ալավերդյան»: Նամակի հեղինակ Զավեն Ալավերդյանը մեզ հայտնեց, որ նույն երեւույթն առկա է նաեւ Իջեւանի հանրակրթական դպրոցներում, դրանցում, ինչպես Իջեւանի Պ. Տէվեճեան տարածաշրջանային քոլեջում, դասերի ժամանակ կրթօջախների դռները փակում են, բացում են միայն դասամիջոցների ժամանակ: Հավելենք, որ նույնը կատարվում է նաեւ հանրապետության մյուս դպրոցներում, որտեղ պահակները դռները փակում են, բանալին դնում իրենց գրպանը եւ դասերի ժամանակ ոչ մեկին ո՛չ ներս են թողնում, ո՛չ՝ դուրս: Կալանավայրերին բնորոշ այս դրվածքը նոր բան չէ եւ պայմանավորված է նրանով, որ աշակերտները սիրով չեն հաճախում կրթօջախներ, եւ հաճախելու նպատակն էլ ոչ թե ուսումն է, այլ՝ պարտադրանքը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ո՞Վ Է ՔԵԶ ՆՄԱՆ ՁԵՎՈՎ ԽՈՍԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎԵԼ

Նիկոլ Փաշինյանն ակնհայտորեն սարսափ է ապրում այն մտքից, որ հունիսի 7-ին կայանալիք ընտրություններում կարող է չվերարտադրվել, եւ դրա համար բոլոր հնարավոր ու անհնարին քայլերին դիմում է: «Պեռաշկի ու կուկուռուզ» է ուտում, պետբյուջեի հաշվին բարեգործություն է անում եւ թոշակներ բարձրացնում, ավտոբուսը նստած՝ դեպի մարզեր է գնում, կանանց ծանր պայուսակներն է տեղափոխում եւ, ամենակարեւորը՝ հայհոյում ու վարկաբեկում է իր մրցակիցներին:

Եթե նախորդ ընտրություններում նրա թիրախը նախկին իշխանություններն էին՝ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, ապա այս անգամ հերթը հասել է Սամվել Կարապետյանին, որն իշխանության մեջ չի եղել, թալանի մեջ չեն կարող մեղադրել, Արցախը հանձնելու մեջ՝ նույնպես: Փաշինյանը գիտակցում է, որ այս փուլում իր հիմնական քաղաքական հակառակորդը, գլխավոր մրցակիցը Սամվել Կարապետյանն է, որի վարկանիշը բարձրանում է, եւ այն մտքից, որ նա կարող է իրեն հաղթել, ընկնում է ցայտնոտի ու ցնցումների մեջ: Փաշինյանի ամենօրյա ֆեյսբուքյան լայվերը վկայում են այն մասին, որ անգամ իշխանական շրջանակները չեն հավատում այն սոցհարցումներին, որոնց համաձայն՝ առաջին տեղում «Քաղպայմանագիրն» է, եւ իրենք ունեն 50+1 տոկոս: Վկայում են նաեւ այն մասին, որ նրա նյարդերը լարված են, եւ նա բոլոր սահմաններն ու բարեկրթության նորմերը խախտել է:

Քաղաքագետ **Սերգեյ Շաքարյանցը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Փաշինյանի լայվերի եւ եղկելի բառապաշարի մասին, նկատեց. «Առհասարակ, որեւէ քաղաքակիրթ մարդ իրավունք չունի դիմացինին բոմժ անվանելու, անկախ այն բանից, թե մարդը որ երկրի քաղաքացի է կամ ինչ քաղաքական հայացքներ ունի: Առհասարակ, դու ի՞նչ իրավունք ունես որեւէ մեկի մասին այդպես խոսելու: Ո՞վ ես դու: Որեւէ պաշտոնյա չունի այդ իրավունքը: Դա խոսում է մարդու դաստիարակության պակասի մասին: Ենթադրաբար, ուզում է Թրամփին նմանվել: Նա էլ ասում էր՝ մի հարվածով էսա Իրանը վերացնելու եմ: Կյանքը ցույց տվեց, որ Իրանին չկարողացան, Փաշինյանի բնորոշմամբ, սարքել բոմժ: Ինչպես տեսանք, ո՛չ մակեդոնացիները, ո՛չ արաբները, ո՛չ էլ Թրամփը չկարողացան ոչնչացնել Իրանն ու տեղի քաղաքակրթությունը: Սամվել Կարապետյանը նպաստել է պատմական ժառանգության պահպանմանը, գոնե՝ Հայ առաքելական եկեղեցու հարցում: Նիկոլ Փաշինյանը փորձում է իրեն Աստծո տեղը դնել, սակայն ինքը մի սովորական շարքային անգրագետ է, որ չի էլ կարող Կարապետյանի հետ համեմատվել: Ո՞վ է քեզ տվել նման իրավունք՝ խոսելու Կարապետյանի մասին այդ բառապաշարով: Ի՞նչ ես ուզում՝ նսեմացնե՞լ քաղաքական հակառակորդներիդ: Ոչ, դու ինքդ քեզ ես նսեմացնում առաջին հերթին, այ Իջեւանի գժանոցի պացիենտ: Ո՞վ է տեսել բացարձակ մեծամասնություն ունեցող ուժն այսքան վախեցած լինի: Թրամփն էլ սրա նման միայն մեծ-մեծ խոսել գիտի, բայց գիշերը ընդունեց Իրանի պայմանները: Նիկոլ Փաշինյանն էլ ճիշտ այդպիսին է, անդադար պոռոտախոսում է, բայց տակը ոչինչ չկա: Այս մարդը վերջացած մարդ է, նրա քաղաքական կարիերան շուտով կավարտվի, նա փրփուրներից է կախվում, գիտի, որ իր վերջը եկել է»:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿ ՓՈԽՎԵՑ՝ Ի ՎՆԱՍ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ԹՐԱՄՓԻ

Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը հայտարարել է Միացյալ Նահանգների դեմ պատերազմում հաղթանակի մասին՝ հիմք ընդունելով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարությունը, որ իրենք, որպես բանակցությունների հիմք, ընդունում են Իրանի կողմից առաջ քաշված 10 կետերից կազմված խաղաղության նախագիծը: ԱՄՆ նախագահը մինչ այդ հայտարարում էր, որ կվերացնի Իրանի հազարամյա քաղաքակրթությունը, որը շատերն ընդունել էին որպես Իրանի դեմ միջուկային զենք կիրառելու սպառնալիք, բայց ընդամենը մի քանի ժամ անց հայտարարեց, որ ստացել են Իրանի 10 առաջարկները եւ պատրաստ են դրանք ընդունել որպես աշխատանքային նախագիծ՝ հետագա բանակցությունների համար: 41-օրյա պատերազմից հետո՝ փետրվարի 28-ից մինչեւ ապրիլի 9-ը, կողմերի միջեւ հաստատվել է երկշաբաթյա հրադադար, իսկ բանակցությունները սկսվելու են ապրիլի 10-ին՝ Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում:

Իրանի Անվտանգության խորհուրդը վստահեցնում է, որ իրանական 10 կետից կազմված նախագիծը պարունակում է իրենց հիմնական պահանջները՝ Հորմուզի նեղուցի վերահսկողությունը թողնել Թեհրանին, վճարել փոխհատուցում գործած ավերածությունների եւ պատճառված վնասի դիմաց, վերացնել պատժամիջոցները, թույլատրել շարունակելու ուրանի հարստացումը եւ դուրս բերել զորքերը Մերձավոր Արեւելքից: Մինչեւ բանակցությունների ավարտը Իրանը համաձայնել է ապահովել Հորմուզի նեղուցով ազատ նավարկությունը:

Հնարավո՞ր է, որ այս հրադադարը ժամանակավոր է եւ չհանգեցնի կայուն խաղաղության: Իհարկե, հնարավոր է, եւ չի բացառվում, որ ԱՄՆ-ն միտումնավոր է համաձայնել երկշաբաթյա հրադադարին, որպեսզի իրականացնի զորքերի վերախմբավորում եւ նոր հարձակում Իրանի նկատմամբ: Բայց բոլորի համար էլ պարզ էր, որ ԱՄՆ-ն հայտնվել էր փակուղում, նույն ձեւով պատերազմն այլեւս արդյունավետ չէր եւ ոչինչ չէր տալիս: Կամ պետք էր սկսել ցամաքային ներխուժում՝ գրավել երկիրը եւ այնտեղ հաստատել մարիոնետային կառավարություն, ինչը շատ ռիսկային էր, քանի որ Իրանի բանակը եւ հասարակությունը պատրաստ էին համաժողովրդական դիմադրության՝ օտարերկրյա ներխուժումը հետ մղելու համար: Մյուս տարբերակը միջուկային հարվածն էր, որը կարող էր ծնկի բերել Իրանի կառավարությանը եւ ժողովրդին, ինչպես դա արվեց 1945 թվականին, երբ ԱՄՆ-ն միջուկային ռմբակոծության ենթարկեց Ճապոնիան: Բայց 1945 թվականի հետ համեմատությունը հիմա անտեղի է. նախ, այն ժամանակ Ճապոնիան ինքն էր նախահարձակ եղել, եւ ամենակարեւորը՝ 1945 թվականին միայն ԱՄՆ-ն էր տիրապետում միջուկային զենքի, եւ իր կողմից միջուկային զենքի կիրառումը չէր կարող հանգեցնել պատասխան հարվածի: Հիմա աշխարհում տասնյակից ավելի երկրներ ունեն նման հնարավորություն եւ կարողություն, եւ միջուկային հարվածը մյուս երկրներին եւս կարող է թույլ տալ նման քայլի գնալ՝ բերելով համաշխարհային աղետի:

Հնարավոր է, որ երկու շաբաթվա ընթացքում կողմերը ոչ մի համաձայնության էլ չգան, եւ բանակցությունները շարունակվեն, ու կողմերից որեւէ մեկը չփորձի խախտել հաստատված հրադադարը, դրանով հաստատվի նոր ստատուս քվո, երբ չկա պատերազմ, բայց չկա նաեւ կայուն խաղաղություն: Բայց այդ դեպքում Իրանը կարող է միակողմանի փակել Հորմուզի նեղուցը՝ թույլ տալ անցնել միայն այն նավերին, որոնք իրեն վճարում են, կամ միայն այն երկրների նավերին, որոնց ինքը համարում է բարեկամ:

Անկախ ամեն ինչից՝ կշարունակվի հրադադարը, թե ոչ, կկնքվի խաղաղության պայմանագիր, թե ուղղակի պատերազմը չի վերսկսվի, հաստատված հրադադարն Իրանի միանշանակ հաղթանակն է: Պատերազմ սկսելով Իրանի դեմ՝ ԱՄՆ-ն մի խնդիր էր դրել. հեռացնել գործող վարչակազմը եւ իշխանության բերել կամ, ավելի ճիշտ՝ նշանակել իրենց ենթակա իշխանություն, դրանով վերահսկողություն հաստատել իրանական նավթի, գազի եւ մյուս օգտակար հանածոների նկատմամբ: Չնայած ԱՄՆ-ին եւ Իսրայելին հաջողվեց սպանել Իրանի ռազմաքաղաքական իշխանության բազմաթիվ առանցքային գործիչների, բայց Իրանում կամակատար իշխանություն հաստատել չհաջողվեց, ավելին՝ Իրանի հասարակությունն էլ ավելի համախմբվեց սեփական իշխանության շուրջ, իսկ այն ընդդիմադիր ուժերը, որոնք պայքարում էին իշխանության դեմ եւ հավատում էին, որ ԱՄՆ-ն իրենց օգնում է իբրեւ թե հանուն ժողովրդավարության, հասկացան, որ ժողովրդավարությունն ու մարդու իրավունքներն ընդամենը գործիք էին, որոնք նրանք օգտագործում էին՝ իրանական նավթին եւ մյուս հարստություններին տիրանալու համար:

Ինչպե՞ս կարող է ազդել Իրանի հաղթանակը Հայաստանի ինչպես ներքաղաքական կյանքի, այնպես էլ արտաքին քաղաքականության վրա: Նախ, Հայաստանում հակաիրանական եւ պրոամերիկյան մարիոնետային իշխանություն է, որի լեգիտիմության աղբյուրն արտաքին օժանդակությունն է, Փաշինյանի կարգախոսն այն է, որ մենք իշխելու իրավունք ունենք, քանի որ դա մեզ արտոնել են ԱՄՆ-ն ու Եվրամիությունը: Շատերը կարծում են, որ պարտությունից հետո ԱՄՆ-ն կփորձի էլ ավելի ուժեղացնել իր ազդեցությունը Իրանի շուրջ գտնվող տարածքներում, բայց կյանքը եւ պատմությունը ցույց են տալիս, որ պարտված երկրները լքում են իրենց վասալներին: ԱՄՆ-ին Հայաստանը պետք էր որպես Իրանի դեմ ճնշման գործիք, հիմա այդ գործիքի անհրաժեշտությունը չկա: «Թրամփի ուղի» կոչվածը չի կարող գործարկվել՝ պարտվածների անունով ուղիներ չեն կոչվում, պարտվածները չեն կարող նոր նախագծեր իրագործել, առավել եւս՝ առանց հաղթողների համաձայնության: Ադրբեջանն այլեւս չի կարողանա սպառնալ Հայաստանին պատերազմով՝ մեր տարածաշրջանում պատերազմի եւ խաղաղության հարցերն այլեւս լուծելու է Իրանը: Հայաստանում պետք է հաստատվի նոր իշխանություն, որը բարեկամական կլինի Իրանի նկատմամբ եւ կկարողանա օգտագործել ստեղծված նոր իրողությունները՝ հօգուտ Հայաստանի եւ հայ հասարակության:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԲՈՄԺԱԶԱՆԳՎԱԾԻ ԿՈՒՌՔԸ

Մի անգամ գրել եմ, որ եթե աշխարհում մրցույթ հայտարարվեր, թե որ պետությունն է աննորմալության առումով առաջատարը, մեր երկիրը կլիներ մրցակցությունից դուրս: Եվ վարչապետի անձն էլ, բնականաբար, կլիներ դրա պսակը՝ իր ոչ ադեկվատությամբ: Մարդը, օրինակ, վերջերս անցել է իր մրցակիցների շրջանում ուժեղի, գրագետի ու խելացիի փնտրտուքին: Նրան հակադրվում են, թե դու դեգերում ես վախի տիրույթում, օրինակ՝ երբ ասում ես, թե միլիարդատեր Սամվել Կարապետյանը կդառնա բոմժ: Նրա խոսքը, բնականաբար, ուղղված էր իրենով հիացող հոգով բոմժերին, որովհետեւ միայն նրանք չեն հասկանա, որ միլիարդատիրոջ ունեցվածքն իրենց կուռքի ձեռքի հասանելիությունից դուրս է: Բայց դրանք այն մարդիկ են, ովքեր իրականում իր միակ սոցիալական հենարանն են, եթե չհաշվենք բարձր պաշտոն զբաղեցնողներին:

Նիկոլի վերջին լայվը հերթական անգամ վկայեց, որ նիկոլիզմի «գաղափարախոսության» հասցեատերն անգրագետ զանգվածն է: «Գաղափարախոսություն» հասկացությունը՝ չակերտավոր, քանի որ անիմաստ ու անհեթեթ մտքերի շարանը դժվար է համարել գաղափարախոսություն: Ու նման բովանդակությունն էլ սովորաբար համապատասխան ոճ է պարտադրում: Նիկոլն ու նրա ենթակաները փորձում են այդ զանգվածին գրավել կարճ եւ ձեւի տեսակետից իբրեւ թե ազդեցիկ-հասկանալի հաղորդագրություններով: Իհարկե, մեկ-մեկ կարող են սպրդել մտքեր, որ որոշակի իմաստ են պարունակում, սակայն հիմնականը, այնուամենայնիվ, անհեթեթ մտքերի շարան է:

Այդ ոլորտում առաջատարի դափնին, բնականաբար, պատկանում է նիկոլիզմի առաջնորդին՝ Նիկոլ Փաշինյանին: Ու հենց այդ պատճառով է, որ հիմնականում վերլուծում եւ քողազերծ են արվում վերջինիս մտքերը: Բայց պատահում են նաեւ «մտքի գոհարներ»՝ արտաբերված նրա ենթակաների կողմից: Օրինակ, ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ալենի վերջին մտքերը. «Ադրբեջանի անվտանգության ամենամեծ երաշխավորը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ Հայաստանի Հանրապետության երաշխավորն Ադրբեջանն է»: Այն, որ ասվածն անհեթեթություն է, երկակի կարծիք լինել չի կարող, որովհետեւ Արցախն էթնիկ զտման ենթարկած եւ Հայաստանի տարածքի վրա աչք դրած մեր թշնամին տեսականորեն անգամ չի կարող լինել երաշխավոր, ուր մնաց թե ամենամեծը: Իսկ մենք նրան պետք չենք ընդհանրապես որպես հարեւան, ուր մնաց թե լինենք ամենամեծ երաշխավորը: Բայց միաժամանակ պետք է ընդունենք, որ այդ արտահայտությունն արտասովոր է եւ հիշվող: Իսկ քարոզարշավի ընթացքում ամենից ավելի արդյունավետ են նման հաղորդագրությունները: Հատկապես երբ դրանք լսելի են դառնում բոմժական մտածողությամբ անձանց:

Սա նշանակում է, որ Սամվել Կարապետյանի կողմից ղեկավարվող քաղաքական ուժը ողջ ուշադրությունը պետք է դարձնի մեծ բնակավայրերին՝ Երեւան, Գյումրի, Վանաձոր, Էջմիածին, Կապան, Գորիս եւ այլն: Հաշվի առնելով նախ այն, որ բոմժազանգվածի հիմնական մասը քաղաքներում չի բնակվում, եւ, երկրորդ, այդ զանգվածը միշտ ձայն է տվել իշխանությանը՝ ինչպիսին էլ այն լիներ: Դա նման է ազգային փոքրամասնությունների՝ միշտ գործող իշխանությանը քվեով ապահովելու խնդրին: Դա այդպես է ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ հարեւան Վրաստանում: Ենթադրում եմ, որ նույն երեւույթն առկա է նաեւ մեր թշնամի երկրում, ինչը նշանակում է, որ այդ զանգվածին վերափոխելու նպատակով ծախսվելիք ջանքերը լինելու են ապարդյուն: Դրանց փոխարեն անհրաժեշտ է կենտրոնանալ վերը նշված բնակավայրերում չկողմնորոշված անձանց ուղղությամբ աշխատանքի վրա:

Որպեսզի ավելի պարզ լինի ասվածը՝ հիշենք գործարարներից մեկի (խոսքը Ծառուկյանի մասին չէ) կուսակցության կողմից ժամանակին հայտնաբերված «քինդեր սյուրպրիզը»: Հաշվարկելով ընտրողների անհրաժեշտ քանակը եւ աշխատելով կոնկրետ ընտրազանգվածի ուղղությամբ՝ վերջինս տեղ գրավեց խորհրդարանում: Իհարկե, խոսքը ոչ թե ընտրողին գրավելու ոչ օրինական մեթոդի մասին է, այլ՝ ընտրական համակազմը (կոնտինգենտը) սահմանելու մասին: Ճիշտ է, այդ մեթոդով հնարավոր եղավ ընդամենը ներկայություն ապահովել Ազգային ժողովում, սակայն մարտավարությունն արդարացրեց իրեն: Այդ մարտավարությանն անցնելը հատկապես անհրաժեշտ է «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» ընդդիմադիր դաշինքում Սամվել Կարապետյանի անվան չլինելու հանգամանքով պայմանավորված, ինչը պետք է լիներ դաշինքի այցեքարտը բոմժազանգվածի հետ աշխատելու ժամանակ:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԿՈՆՖԼԻԿՏ

ԻՐԱՆ-ԱՄՆ ՐԱԴԱԴԱՐ. ԵՐԲ ԲՈԼՈՐԸ ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ «ՀԱՂԹԱՆԱԿԻ» ՄԵՋ, ԲԱՅՑ...

Երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ մի քանի ժամում կարող է «ոչնչացնել մի ամբողջ քաղաքակրթություն»՝ սպառնալով, ըստ էության, բնաջնջել Իրանը, եւ դա պատրաստվում էր անել ապրիլի 7-ի գիշերը, Իսրայելի հեռուստաընկերությունն ուղիղ եթերում ցուցադրեց հետհաշվարկի ժամանակացույցը: Ամբողջ աշխարհը լարված հետեւում էր դրան, այդ թվում՝ Հայաստանում: Համաշխարհային ժամանակն այլեւս չափվում էր չարաբաստիկ հարվածի սպասման ծանր վայրկյաններով: Բայց... լուսադեմին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հնչեցրած խոսքը պակաս հարվածի ուժ չունեցավ: Ամեն ինչ վճռված է: Սպիտակ տան ղեկավարը «ցրեց» Իրանի վրա ծանրացած «սեւ ամպերը», որոնք հենց ինքն էր գոյացրել: Հայտարարեց՝ համաձայն է Իրանի հետ հրադադարին, որը, իր պնդմամբ, երկկողմանի է լինելու:

Դրանից հաշված ժամեր առաջ «դարակազմիկ» հարվածից հետ կանգնելու խնդրանքով նրան դիմել էր Պակիստանի վարչապետը: Թրամփն արձագանքել էր՝ մտածում է այդ առաջարկի մասին, լարված բանակցություններ են ընթանում: «Կարեւոր օր համաշխարհային խաղաղության համար: Իրանը դա է ուզում, նրանց հետ կապված՝ այլեւս բավ է: Դադարեցնել Իրանի դեմ ռմբակոծությունները ու հարձակումները: Սա կլինի երկկողմանի հրադադար: Այս քայլի պատճառն այն է, որ մենք արդեն հասել եւ գերազանցել ենք բոլոր ռազմական նպատակները եւ շատ առաջ ենք գնացել Իրանի հետ երկարաժամկետ խաղաղության եւ Մերձավոր Արեւելքում խաղաղության վերջնական համաձայնագրի պատրաստման գործում: Մենք ստացել ենք Իրանից 10 կետից բաղկացած առաջարկ եւ կարծում ենք, որ այն բանակցությունների համար գործնական հիմք է: Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ անցյալում առկա անհամաձայնությունների գրեթե բոլոր կետերի շուրջ համաձայնություն է ձեռք բերվել, բայց երկշաբաթյա ժամանակահատվածը թույլ կտա վերջնականապես հաստատել եւ ամրապնդել համաձայնագիրը: Ամերիկայի Միացյալ Նահանգների անունից, որպես նախագահ, ինչպես նաեւ՝ Մերձավոր Արեւելքի երկրները ներկայացնող գործիչ, ես պատիվ եմ համարում, որ այս երկարատեւ խնդիրը մոտ է լուծմանը»,- շեշտեց ԱՄՆ նախագահը: «Իրանական ուրանի հարցը «լիովին կլուծվի»,- հավելեց Թրամփը,- 100 տոկոսով: Անկասկած: Այլապես չէի համաձայնի հրադադարին»: Նա Իրանի հետ ժամանակավոր հրադադարն անվանել է «լիակատար եւ վերջնական հաղթանակ»: Սա Թրամփի ոճն է. պատերազմ սանձազերծելով՝ խոսել հաղթանակի մասին: Ուշագրավ է, որ Իրանի ազգային անվտանգության գերագույն խորհուրդը հակառակն է պնդում՝ որ հենց իրենք են հաղթել ԱՄՆ-ի հետ հակամարտությունում, քանի որ Վաշինգտոնը ստիպված է եղել ընդունել ԻԻՀ բոլոր պահանջները, որոնք ներառված են 10 կետից բաղկացած ծրագրում: «Միացյալ Նահանգները ստիպված է եղել ընդունել Իրանի 10 կետից բաղկացած առաջարկը, որը ներառում է չհարձակման հիմնարար պարտավորություն, Հորմուզի նեղուցի նկատմամբ իրանական վերահսկողության պահպանում, ուրանի հարստացման համաձայնություն, բոլոր առաջնային եւ երկրորդային պատժամիջոցների չեղարկում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ ՄԱԳԱՏԷ-ի կառավարիչների խորհրդի բոլոր բանաձեւերի գործողության դադարեցում, Իրանին փոխհատուցման վճարում, տարածաշրջանից ամերիկյան ռազմական ուժերի դուրսբերում եւ պատերազմի դադարեցում բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում իսլամական դիմադրության դեմ»,- ասված է հայտարարության մեջ:

Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչին իր հերթին հայտարարել է, որ եթե Իրանի վրա հարձակումները դադարեցվեն, երկրի զինված ուժերը կդադարեցնեն պաշտպանական գործողությունները: 2 շաբաթվա ընթացքում հնարավոր կլինի անվտանգ անցում Հորմուզի նեղուցով՝ Իրանի զինված ուժերի հետ համակարգմամբ եւ հաշվի առնելով տեխնիկական սահմանափակումները: Իսրայելի արձագանքը չուշացավ. վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակը պաշտոնական հայտարարություն է տարածել, որում հայտնել է Իսրայելի կողմից Իրանի հետ հրադադարի համաձայնագրի պահպանման մասին. «Իսրայելն աջակցում է նախագահ Թրամփի որոշմանը՝ 2 շաբաթով դադարեցնել Իրանի դեմ հարվածները, եթե Իրանն անհապաղ բացի նեղուցները եւ դադարեցնի Միացյալ Նահանգների, Իսրայելի եւ տարածաշրջանի երկրների վրա բոլոր հարձակումները: Իսրայելը նաեւ աջակցում է ԱՄՆ ջանքերին՝ ապահովելու, որ Իրանն այլեւս միջուկային, հրթիռային կամ ահաբեկչական սպառնալիք չներկայացնի Միացյալ Նահանգների, Իսրայելի, Իրանի արաբ հարեւանների եւ աշխարհի համար: Միացյալ Նահանգներն Իսրայելին հայտնել է իր հանձնառությունը՝ առաջիկա բանակցությունների համար՝ նույնպես: ԱՄՆ-ն կօգնի՝ վերականգնել նավագնացությունը Հորմուզի նեղուցում: Կլինեն շատ դրական գործողություններ: Մեծ գումարներ կաշխատեն: Իրանը կարող է սկսել վերակառուցման գործընթացը: Մենք կբեռնենք ամեն տեսակի ապրանքներ եւ պարզապես կսպասենք, որպեսզի համոզվենք, որ ամեն ինչ լավ կընթանա: Վստահ եմ, որ այդպես էլ կլինի: Ճիշտ այնպես, ինչպես մենք ապրում ենք ԱՄՆ-ում, սա կարող է լինել ոսկե դարաշրջան Մերձավոր Արեւելքի համար»,- TruthSocial սոցիալական ցանցում իր որոշումը մեկնաբանեց Թրամփը եւ խոստացավ, որ ԱՄՆ-ն կաջակցի Իրանի տնտեսական վերականգնմանը եւ կօգնի՝ լուծելու Հորմուզի նեղուցում առկա խնդիրները:

«Հիմնվելով Պակիստանի վարչապետ (Շահբազ) Շարիֆի եւ ֆելդմարշալ (Ասիմ) Մունիրի հետ զրույցների վրա, որոնց ընթացքում նրանք խնդրեցին ինձ զսպել Իրանի դեմ ուղղված ապակառուցողական ուժը, եւ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Հորմուզի նեղուցի լիարժեք, անհապաղ եւ անվտանգ բացման համաձայնության դեպքում ես համաձայն եմ երկու շաբաթով դադարեցնել Իրանի դեմ ռմբակոծությունները եւ հարձակումները: Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչին իր հերթին հայտարարել է, որ եթե Իրանի վրա հարձակումները դադարեցվեն, երկրի զինված ուժերը կդադարեցնեն պաշտպանական գործողությունները: 2 շաբաթվա ընթացքում հնարավոր կլինի անվտանգ անցում Հորմուզի նեղուցով՝ Իրանի զինված ուժերի հետ համակարգմամբ եւ հաշվի առնելով տեխնիկական սահմանափակումները: Իսրայելի արձագանքը չուշացավ. վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակը պաշտոնական հայտարարություն է տարածել, որում հայտնել է Իսրայելի կողմից Իրանի հետ հրադադարի համաձայնագրի պահպանման մասին. «Իսրայելն աջակցում է նախագահ Թրամփի որոշմանը՝ 2 շաբաթով դադարեցնել Իրանի դեմ հարվածները, եթե Իրանն անհապաղ բացի նեղուցները եւ դադարեցնի Միացյալ Նահանգների, Իսրայելի եւ տարածաշրջանի երկրների վրա բոլոր հարձակումները: Իսրայելը նաեւ աջակցում է ԱՄՆ ջանքերին՝ ապահովելու, որ Իրանն այլեւս միջուկային, հրթիռային կամ ահաբեկչական սպառնալիք չներկայացնի Միացյալ Նահանգների, Իսրայելի, Իրանի արաբ հարեւանների եւ աշխարհի համար: Միացյալ Նահանգներն Իսրայելին հայտնել է իր հանձնառությունը՝ առաջիկա բանակցությունների մասին, ապա Թրամփի վարչակազմն արդեն պատրաստվում է դրանց, իսկ ամերիկյան պատվիրակության կազմում, հավանաբար, կլինեն փոխնախագահ Ջեյ Դի Վենսը, նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիտկոֆը եւ Թրամփի փեսան՝ Ջարեդ Քուշները. այս մասին հաղորդում է CNN-ը՝ հղում անելով ԱՄՆ պաշտոնյաներին: Նշվում է, որ հանդիպումը կարող է տեղի ունենալ Իսլամաբադում՝ Պակիստանի միջնորդությամբ: Սպիտակ տունը պարզաբանել է, որ այս ձեւաչափի վերաբերյալ քննարկումները շարունակվում են, սակայն վերջնական որոշում դեռեւս չի կայացվել եւ կհայտարարվի առանձին: Չնայած կողմերի հակասական հայտարարություններին, փաստ է, որ հրադադարն ու առաջիկա բանակցությունները կարող են մարդկության համար նվազեցնել հերթական պատերազմի բեռը, որովհետեւ հազարավոր մարդկանց կյանքեր խլած պատերազմում հաղթողներ չեն լինում: Բայց Իրանի շուրջ իրավիճակը կարող է ազդել համաշխարհային իրավիճակի եւ հատկապես մեր տարածաշրջանի զարգացումների վրա:

Արա ԱԼՈՅԱՆ

Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչին իր հերթին հայտարարել է, որ եթե Իրանի վրա հարձակումները դադարեցվեն, երկրի զինված ուժերը կդադարեցնեն պաշտպանական գործողությունները: 2 շաբաթվա ընթացքում հնարավոր կլինի անվտանգ անցում Հորմուզի նեղուցով՝ Իրանի զինված ուժերի հետ համակարգմամբ եւ հաշվի առնելով տեխնիկական սահմանափակումները: Իսրայելի արձագանքը չուշացավ. վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակը պաշտոնական հայտարարություն է տարածել, որում հայտնել է Իսրայելի կողմից Իրանի հետ հրադադարի համաձայնագրի պահպանման մասին. «Իսրայելն աջակցում է նախագահ Թրամփի որոշմանը՝ 2 շաբաթով դադարեցնել Իրանի դեմ հարվածները, եթե Իրանն անհապաղ բացի նեղուցները եւ դադարեցնի Միացյալ Նահանգների, Իսրայելի եւ տարածաշրջանի երկրների վրա բոլոր հարձակումները: Իսրայելը նաեւ աջակցում է ԱՄՆ ջանքերին՝ ապահովելու, որ Իրանն այլեւս միջուկային, հրթիռային կամ ահաբեկչական սպառնալիք չներկայացնի Միացյալ Նահանգների, Իսրայելի, Իրանի արաբ հարեւանների եւ աշխարհի համար: Միացյալ Նահանգներն Իսրայելին հայտնել է իր հանձնառությունը՝ առաջիկա բանակցությունների մասին, ապա Թրամփի վարչակազմն արդեն պատրաստվում է դրանց, իսկ ամերիկյան պատվիրակության կազմում, հավանաբար, կլինեն փոխնախագահ Ջեյ Դի Վենսը, նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիտկոֆը եւ Թրամփի փեսան՝ Ջարեդ Քուշները. այս մասին հաղորդում է CNN-ը՝ հղում անելով ԱՄՆ պաշտոնյաներին: Նշվում է, որ հանդիպումը կարող է տեղի ունենալ Իսլամաբադում՝ Պակիստանի միջնորդությամբ: Սպիտակ տունը պարզաբանել է, որ այս ձեւաչափի վերաբերյալ քննարկումները շարունակվում են, սակայն վերջնական որոշում դեռեւս չի կայացվել եւ կհայտարարվի առանձին: Չնայած կողմերի հակասական հայտարարություններին, փաստ է, որ հրադադարն ու առաջիկա բանակցությունները կարող են մարդկության համար նվազեցնել հերթական պատերազմի բեռը, որովհետեւ հազարավոր մարդկանց կյանքեր խլած պատերազմում հաղթողներ չեն լինում: Բայց Իրանի շուրջ իրավիճակը կարող է ազդել համաշխարհային իրավիճակի եւ հատկապես մեր տարածաշրջանի զարգացումների վրա:

ԱԿԱՆԻ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՊՆ-Ն ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ Է ԱՆՑԵԼ

Գրել էինք, որ Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի բնակիչ, 41-ամյա Արտյոմ Հարությունյանն ապրիլի 2-ին, ժամը 15-ի սահմաններում, Կոթիի սահմանամերձ «Խոլնի քար» տարածքում հակահետեւակային ականի պայթյունից վիրավորվել է: Գնացել է կորած անասունների հետեւից ու ականի վրա պայթել: Համագյուղացիների օգնությամբ նա սահմանագոտուց դուրս է բերվել, շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել Նոյեմբերյանի բժշկական կենտրոն, որտեղ նրա աջ ոտքը՝ կոճից վերեւ, անդամահատվել է: Անասնապահն ականի պայթյունից վիրավորվել է սահմանի վրա, իսկ ոչ ուր են ականներ տեղակայված լինելու վերաբերյալ զգուշացնող նշանները, ոչ ուր են սահմանի այդ հատվածը հսկող սահմանապահները, որ բնակիչներին հեռու պահեն ականապատ դաշտից, նրանք ականի պայթյունից հետո էլ չեն իմացել դեպքի մասին, որ վիրավորին աջակցություն ցուցաբերեին: Կոթիից լրատվամիջոցներին հայտնել են, որ Արտյոմ Հարությունյանը սահմանամերձ տարածքում իր կորած կովն է որոնելիս եղել, մինչդեռ իրականում նա այնտեղ սինդրիկ քաղելու է գնացած եղել: Դեպքից հետո ՊՆ-ն որոշ միջոցներ է ձեռնարկել՝ տրակտորով փորել է տվել, փակել դեպի սահմանի այդ հատվածը տանող ճանապարհը, որպեսզի սինդրիկ կամ այլ ուտելի բույսեր քաղողները, անասուններ արածեցնողները չգնան սահմանամերձ, ականապատ տարածք: Ապրիլի 6-ին Նոյեմբերյանի համայնքապետարանը բնակիչներին զգուշացնող հայտարարություն է տարածել. «Համայնքի հարգելի՛ բնակիչներ, գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացման հետ կապված՝ խնդրում ենք ընտանի կենդանիների արոտը կազմակերպել այնպես, որ այն անմիջական կապ չունենա սահմանային հատվածների հետ: Խնդրում ենք ցուցաբերել պատասխանատվություն եւ կենդանիների արոտը կազմակերպել անվտանգ տարածքներում: Շնորհակալություն ցուցաբերած զգոնության եւ համագործակցության համար»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Թռավ տիեզերք՝ Աստծուն համոզելու

Առաջիկա ընտրություններում աթոռը պահելու համար վարչապետը թռավ տիեզերք՝ Աստծուն համոզելու: Զյունափառ ամպերի միջից նրան ընդառաջ ելավ հրեշտակապետը. «Դու, հողեղեն արարած, ինչ ես փնտրում անհունում»:

Վարչապետը ծնկի իջավ, բռնեց նրա ճերմակ քղանցքն ու համբուրեց:

- Քեզ եմ ուզում, տեր իմ… Քո ոտքն եմ եկել:

- Ես հրեշտակապետն եմ: Իզուր ես եկել: Վճռված է՝ պետք է հեռանաս:

- Շեֆդ ո՞ւր է: Ուզում եմ խոսել երկնային գրասենյակի պետի հետ:

- Նա բոլորիս Աստվածն է:

- Յաա՛, իրո՞ք: Նման վճիռ կայացնողը իմը չի կարող լինել՝ կանչիր:

- Տերը հանգստանում է:

- Ինչ է արել, որ հանգստանում է: Քանի՞ միլիոն տարի առաջ ստեղծեց աշխարհը: Վեց օր տեւեց, չէ՞: Յոթերորդ օրը՝ հանգիստ: Վեց օրում ստեղծածն ես չէ՞ր լինելու: Ասա՝ ինչի՞ վռազեց ու էսքան անկատար աշխարհ ստեղծեց:

- Անքննելի են գործերն Աստծո:

- Անքննելի են նաեւ իմ գործերը: Մենք իր գործերին չենք խառնվում, թող ինքն էլ մերին չխառնվի: Լուր տար՝ ես հեռացողը չեմ:

- Որոշում կա՝ պիտի հեռանաս: Խաբեբա ու ստախոս ես:

- Եզակի խաբողի է հաջողվում գահին տիրանալ, Աստված վկա:

- Աստծո անունը մի՛ տուր: Դու հանցանքներ ես կատարել, բռնակալի համբավ ունես:

- Ամեն «մեծ գործի» տակ մեծ հանցագործություն կա: Բայց ես ազնիվ եմ.ուզում եմ՝ տալիս են, չեմ ուզում՝ էլի տալիս են: Գափո ապեր, մենք ասիական երկիր ենք: Մի երկու բոմժի չափալախ ենք հասցնում, որ ժողովուրդն իր խերն ու շառը ջոկի:

- Ժողովրդին անտեսում ես:

- Ժողովո՞ւրդ…Իսկ պալատականներս ժողովուրդ չե՞ն՝ անտեր, անփող, սոված, անկիրթ տղերք էին, տես ոնց եմ բտում, քիչ է մնում տրաքվեն:

- Դա հենց չարաշահում է:

- Իշխանությունը հմայքը կկորցնի, եթե չչարաշահես:

- Կա զորավոր մի նպատակ՝ արդար լինել մարդկանց հանդեպ:

- Մարդիկ միջատ են, ժողովուրդը՝ սանձին հարմարված ձի: Ես արքա եմ:

- Պալատականներդ հարազատներ, ընկերներ են: Դա կոռուպցիա է: Դու շարունակ պատերազմ ես հրահրում:

- Կյանքն է ստիպում: Պատերազմ կամ պատերազմի վախ պետք է ունենան, որ իրենց արքային գնահատեն:

- Դու վտանգավոր ես:

- Հաղորդիր Աստծուդ՝ ես հեռանում եմ, բայց գահից հեռանալու միտք չունեմ: Ինքը հազարամյակներ իշխել է, հիմա իմ հերթն է:

- Դու Աստծուն պատերազմ ես հայտարարում:

- Այո: Կյանքի ու մահվան պատերազմ…

ԳԵՏԵՐՆ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ԵՆ ՀՈՍՈՒՄ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐ ՀԱՄԱՐ

Խոսել էինք կոնկրետ խնդիրների մասին՝ ջրի աղտոտում, կոյուղու փլուզված համակարգեր, ոռոգման ցանցերի անգործություն, սելավների վտանգ: Այսինքն՝ տարիներով կուտակված խնդիրների մասին, որոնք չեն լուծվում եւ նոր հեղեղումների պատճառ կարող են դառնալ: Հոդվածն ուղարկեցինք շրջակա միջավայրի նախարարություն՝ նախարար Համբարձում Մաթեւոսյանին՝ ակնկալելով պարզ պատասխաններ՝ ինչ է արվել, ինչ է արվելու, ո՞վ է պատասխանատու: Սկզբում պատասխանը եկավ նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի ստորագրությամբ: Դժվար է այդ գրությունը պատասխան կոչել՝ ընդհանուր ձեւակերպումներ, «տեղյակ ենք», «աշխատանքներ են կատարվում», «պլան է մշակվում»: Մի խոսքով՝ «նոր են ցրցամ տալիս, թե որ կարեն»: Ոչ մի թիվ, ոչ մի ժամկետ, ոչ մի պատասխանատու: Ամենակարեւորը՝ ոչ մի խոսք՝ հոդվածում բարձրացված խնդիրներ ճի՞շտ են, թե՞ ոչ: Գրեցինք երկրորդ հոդվածը՝ մատնացույց անելով պատասխան չստացած, պատասխանի կարոտ հարցերը: Այդ հրապարակումն ուղարկեցինք նախարարություն՝ ոչ թե որպես նոր հարցում, այլ որպես ի տեղեկություն եւ ի գիտություն: Մտածեցինք՝ գուցե կարդան, գուցե այս անգամ հասկանան, որ խնդիրը լուրջ է, գուցե փորձեն կոնկրետ պատասխան տալ:

Բայց ստացանք մի պատասխան, որը, անկեղծ ասած, արդեն նույնիսկ զարմանք չի առաջացնում, այլ՝ տարակուսանք: Երկու մեծամիտ տող. «Տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցերին առնչվող տեղեկությունն արդեն իսկ տրամադրվել է Ձեզ»: Ստորագրել է «պարտականությունները կատարող» Արկադի Խաչատրյանը: Ոչ մի բառ ավել: Այսինքն՝ ըստ նախարարության, հարցը փակված է: Թեման սպառված է: Դեբեդի խնդիրները՝ նույնպես: Սա արդեն պարզապես անտարբերություն չէ, սա խնդրի ու նաեւ մամուլի հանդեպ վերաբերմունք է: Երկու նամակ գրենք, երկու անգամ էլ ստանանք նույն ձեւական պատասխանը: Իսկ Դեբեդը՝ անհանգիստ, վտանգավոր, երբ պետք է՝ կործանարար: Բայց նախարարության կյանքը՝ խաղաղ, հանգիստ, անշտապ: Ընկերներ, Դուք ո՞նց եք հանգիստ աշխատավարձ ստանում, այն էլ՝ բարձր աշխատավարձ, վերջում էլ՝ պարգեւավճարներ, երբ գետը մարդկանց այգիներն է քշում, տներն է ավերում: Ժողովուրդը ձեզ ինչի՞ համար է վարձել, որ նստեք կաբինետներում ու գրեք, թե «պատասխանե՞լ ենք»:

Հասկացա մի պարզ բան. մեր գետերն իրենց համար են հոսում, նախարարության անհոգ կյանքը՝ իր համար: Այնտեղ, կարծես, ո՛չ շտապելու խնդիր կա, ո՛չ պատասխան տալու անհրաժեշտություն, ո՛չ էլ՝ պատասխանատվության զգացում: Տպավորություն է, որ այս մարդիկ մեր երկրի կոնկրետ խնդիրների, դրանց հետեւանքների հետ որեւէ իրական կապ չունեն: Նույնիսկ այն «ցրցամ տալն» էլ չի երեւում: Եվ ամենակարեւոր հարցը մնում է օդում կախված. այս ամենի մասին նախարար Համբարձում Մաթեւոսյանը տեղյա՞կ է: Գիտի՞, թե իր անունից ուղարկված նամակներին ինչ պատասխաններ են գրում իր աշխատողները: Եթե տեղյակ է, ուրեմն սա այս նախարարության ավանդական աշխատաո՞ճն է:

Նման աշխատաոճի արդյունքում էր, որ երկու տարի առաջ Դեբեդ գետը հերթական անգամ «գժվեց» ու հունից դուրս գալով՝ իր ճանապարհին սրբեց ամեն ինչ՝ Ալավերդուց մինչեւ Բագրատաշեն: Քշեց-տարավ այգիներ, վնասեց ու ավերեց տներ, օժանդակ կառույցներ: Մարդիկ մեծ կորուստներ ունեցան, կրած վնասներն ամբողջությամբ չփոխհատուցվեին, եւ կառավարությունն էլ դեռ ամբողջովին չի վերացրել աղետի հետեւանքները:

ՀԳ. *Նախընտրական շրջան է: Բոլորը փորձում են իրենց կատարած աշխատանքը ցույց տալ, ներկայացնել, մարդկանց վստահությունը շահել: Շրջակա միջավայրի նախարարությունը չի՞ ուզում ներկայացնել, թե ինչ է արել Դեբեդի համար: Թե՞ ցույց տալու բան չկա: Մենք պատրաստ էինք գրել նաեւ դրականի մասին: Բայց դրա համար պետք է իրական աշխատանք լինի, եւ պետք է բարեհաճեն պատշաճ պատասխանել լրագրողների հարցերին: Երբ գետը դուրս է գալիս հունից, չի հարցնում՝ նախարարությունում պլանն են մշակում, արդեն պատասխանե՞լ են, թե՞ ուղղակի պետական բյուջեից փող են ստանում՝ ոչինչ չանելու դիմաց:*

Դեբեդի մասին մեր առաջին հոդվածը («Այդ փողը եթե Դեբեդի մեջ լցնեին…») տպագրվեց մարտի 4-ին:

Նյութերը՝ Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԻ

ԻՆՉՊԵՍ ԵՆ «ՎԵՐԱՖՈՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ» ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետսովետական երկրներում սեւեռուն ուշադրություն կա սեփական պատմության վերաիմաստավորման-վերագնահատմանը: Այստեղ մեծ դեր է խաղում կինոն: Ստեղծվում են պատմական գեղարվեստական, վավերագրական կինոնկարներ, որտեղ համադրվում է մի քանի ժանր, այդ թվում՝ պատմականը: Իսկ Հայաստանում կարծես իրադարձություններն այլ հունով են գնում: Ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը դա անվանում է «հայկական ինքնության վերաֆորմատավորում»:

Ասել, թե երեւույթը նոր է ու միայն այս իշխանություններին հատուկ, սխալ կլինի: Իրականում, խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ պահից փորձ արվեց նման «վերաֆորմատավորում» իրականացնել ու հայկական ինքնությունը դարձնել «սովետահայ ինքնություն»: Թե որքանով հաջողվեց դա, դժվար է ասել: Սակայն այդ «վերաֆորմատավորումը» պահպանեց իր կենսունակությունը մինչեւ խորհրդային ժամանակների ավարտը՝ 70 տարի: Հիմա, որպեսզի հասկանանք, թե ինչ են փորձում անել ներկայիս հայկական իշխանությունները՝ փորձելով «վերաֆորմատավորել հայկական ինքնությունը՝ ըստ իրենց քաղաքական թեզիսների», ինչպես ժամանակին արվել է սովետական իշխանության կողմից՝ սովետական պետական գաղափարախոսության թեզիսների հիման վրա, նախ պետք է հասկանանք, թե ինչպես է Հայաստանի առաջին հանրապետությունը կամ դաշնակցական Հայաստանը ներկայացվել խորհրդահայ կինոյում: «Սարոյան եղբայրներ», «Զանգեզուր», «Երկունք», «Նվագախմբի տղաները» եւ էլի մի շարք կինոնկարներ այդ «վերաֆորմատավորման» վառ օրինակներ եւ կրողներ են: Ինքնին հասկանալի է, որ Հայաստանի առաջին հանրապետությունը՝ իր բոլոր դրական ու բացասական կողմերով հանդերձ, հայկական պետականության պատմության կարեւոր հանգրվաններից է: Սակայն խորհրդային տարիներին փորձ է արվել այդ փուլը ներկայացնել, որքան հնարավոր է՝ վատ ու բացասական ձեւով:

Գաղափարական, քաղաքական ու պատմական առումով Սովետական Հայաստանը թշնամի էր համարում դաշնակցական Հայաստանին, հետեւաբար, 1918-20 թթ. ընթացքը, երբ արյունաքամ հայ ժողովուրդը կարողացել է թեկուզ կարճատեւ, բայց պետականություն ստեղծել, ներկայացվել է որպես բուրժուա-ազգայնական պետություն, որը գտնվել է ՀՅԴ իշխանության ներքո եւ ներկայացրել է ոչ թե ժողովրդի, այլ իշխող դասակարգի՝ բուրժուազիայի, կղերականության, իշխող տարրերի շահերը: Այստեղից էլ՝ եզրահանգումը, որ նման իշխանությունը չէր կարող լուծել ժողովրդի սոցիալ-տնտեսական խնդիրները, քաղաքական կամ գոյութենական հարցերը եւ խաղալիք էր օտարների ձեռքին: Այն ներկայացվում էր որպես «հին ռեժիմ», որն իր դարն ապրել էր ու կորցրել կենսունակությունը՝ հեղափոխությամբ իր տեղը զիջելով նորին՝ սովետականին: Ու այստեղ հարցը նույնիսկ պատմական ժամանակաշրջանի ճիշտ արտացոլումը չէ: Նույնիսկ պատմությունը կարող էր հարմարեցվել պետական գաղափարական հենքին: Խնդիրն այն է, որ սովետական գաղափարախոսության մեջ փորձում էին տպավորություն ստեղծել, թե սովետական կարգեր հաստատվելուց առաջ ոչինչ գոյություն չի ունեցել, ինչ որ ստեղծվել է, բոլշեւիկների շնորհիվ է: Ի դեպ, հիմա էլ ՔՊ-ական իշխանությունն է փորձում ներկայացնել, թե 2018-ից առաջ մենք պետություն չունեինք, իրենք են մեզ պետություն պարգեւել: Դրանից էլ ծագել է իշխանական խոսույթը՝ «նախկիններ», «թալան», «ավազակապետություն», «քրեաօլիգարխիկ համակարգ», իրենք էլ բերել են «երջանկություն», «բարեկեցություն», «խաղաղություն», բայց այդ գաղափարները համատեղելի չեն ազգային նվիրական իդեալների, երազանքների, ինքնության պահպանման հետ: Ընդ որում, հետաքրքիր է այն, որ սովետական կինոնկարներում կարմիր թելի նման գնում է այն միտքը, որ սովետական կարգերի հաստատումն անխուսափելի էր, եթե դա չլիներ, ապա հայության բնաջնջումը կլիներ կարճ ժամանակի հարց:

Հատկապես այս նախընտրական շրջանում սովետահայ կինոյի հետահայաց դիտարկումն օգտակար է՝ հասկանալու պատմական նախադեպերը, որոնք եղել են մեր ժողովրդի պատմության ոչ վաղ անցյալում: Իսկ պատմությունը, ինչքանով հայտնի է, կրկնվելու միտում ունի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱԶԱՏԱՐԸ ՀԱՍԵԼ Է ԳՅՈՒՂԵՐ, ՏՆԵՐ ՉԻ ՄՏԵԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՇԱՌՔ՝ ԳԱԶԻ ՏԵՍՔՈՎ

Վերջին երկու տարին Տավուշի սահմանամերձ գյուղերում խնդիր է դարձել ձմռան վառելափայտի՝ անտառներից թափուկի հատկացման հարցը: Նախկին տարիներին սահմանամերձ, անտառամերձ

գյուղերի ընտանիքներին անվճար կերպով թույլ էին տալիս մինչեւ 8 խորանարդ մետր թափուկ տանել անտառներից, եւ դրանով նրանք հոգում էին ձմեռվա ջեռուցման խնդիրը: Վերջին 2 տարին այդ գյուղերի բնակիչներին թափուկ վառելափայտ պատրաստելու թույլտվություն տրամադրելիս առաջնահերթությունը տրվել է ընտանեկան նպաստ ստացող անապահով ընտանիքներին, եւ շատ ընտանիքների թափուկ պատրաստելու թույլտվություն չի տրվել, որոշ գյուղերում ընտանիքներին տրվել է միայն 4 խորանարդ մետր թափուկի թույլտվություն: Վերջին ժամանակներում վառելափայտի թափուկը տրամադրվում է բնակավայրերից շատ հեռու, դժվարամատչելի տեղանքների անտառներում, ինչը գյուղացիների համար տրանսպորտային հավելյալ ծախսեր է առաջացնում:

Սահմանամերձ գյուղերի բնակիչները, իհարկե, շատ են ուզում ձմռանը ջեռուցման կամ սնունդ պատրաստելու համար վառելափայտին այլընտրանք ունենալ, սակայն Տավուշի սահմանամերձ որոշ գյուղեր տարիներով զրկված են բնական գազից: 2024թ. նոյեմբերից Իջեւանի սահմանամերձ Կիրանց եւ դրան հարակից Աճարկուտ գյուղերը գազիֆիկացված են, սակայն այդ գյուղերում գտնվող տները գազատարին միացած չեն՝ խողովակաշարեր անցկացված չեն: Իսկ դա բավական թանկ գործ է, որոշ տներ մայր գազատարից բավական հեռու են գտնվում, գյուղացիները գազատարի ճյուղավորումներն անցկացնելու համար պահանջվող գումարը չունեն:

Կիրանցը զբոսաշրջության վայր սարքել փորձող, պարբերաբար այնտեղ մարդկանց խմբեր տանող Նիկոլ Փաշինյանն անցած մեկուկես տարում կարող էր անարդյունավետ աշխատող պաշտոնյաներին տրված պարգեւավճարների մի փոքրիկ մասով լուծել Կիրանցի տների գազիֆիկացման խնդիրը, սակայն չի արել: Հիմա՝ Աժ ընտրությունների շեմին, որոշել են կաշառել գյուղի բնակիչներին եւ սկսել այդ գործը՝ պետբյուջեի հաշվին:

Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանը մեզ ասաց, որ սկսվել է գյուղում գազատարից խողովակաշարեր անցկացնելու աշխատանքը՝ դեպի այն տներ, որոնց համար առկա են գազիֆիկացման նախագծեր: Ներկայում Կիրանցում ոչ մի բնակիչ չի օգտվում երկնագույն վառելիքից: Կիրանցի հարեւան Աճարկուտ գյուղի վարչական ղեկավար Աշոտ Հարությունյանն էլ հայտնեց, որ գյուղը գազիֆիկացված է, սակայն գյուղի տները գազիֆիկացված չեն, թեեւ դրա նախագծային աշխատանքներն արված են, բայց այդ աշխատանքները ներկայում չեն իրականացվում: Սահմանամերձ Բերքաբեր գյուղի 150 տներից մոտ 35-ը գազիֆիկացված է: Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանը մեզ հայտնեց, որ պետբյուջեի ու «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ է գյուղը գազիֆիկացվել, իսկ դեպի տներ գազի ճյուղավորումներն անցկացվում են Իջեւան համայնքի միջոցներով:

Նոյեմբերյան համայնքի հեռավոր, սահմանամերձ Բարեկամավան գյուղ տարիներ առաջ է բնական գազ տարվել, սակայն մայր գազատարից ճյուղավորումներ չեն անցկացվել, բնական գազի ոչ մի բաժանորդ չկա գյուղում: 2025թ. սեպտեմբերի 16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե Տավուշի մարզի սահմանամերձ Կիրանց, Բերքաբեր, Բարեկամավան գյուղերի տներ երբ է գազ անցկացվելու, մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան բնակավայրի՝ դեպի անհատական բնակելի տներ գազիֆիկացումն իրականացված է»: Սակայն իրականությունն այն է, որ Բարեկամավանի տների գազիֆիկացում չի իրականացվել, Բարեկամավանում բնական գազի բաժանորդներ չկան: 2026թ. մարտի 17-ին մարզպետ Ղալումյանին նոր հարցում եմ արել, թե ինչ միջոցներով եւ ով է իրականացրել Բարեկամավանի տների գազիֆիկացումը: Մարզպետարանից հայտնել են. «Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան բնակավայրի՝ դեպի անհատական բնակելի տների գազիֆիկացումն իրականացվել է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջոցներով»:

Բարեկամավանի վարչական ղեկավար Գարիկ Աբազյանից տեղեկացա, որ 2025-ին Վարդանյանների բարեգործությամբ Բարեկամավանի գյուղերի ընտանիքներին անվճար կերպով թույլ էին տալիս մինչեւ 8 խորանարդ մետր թափուկ տանել անտառներից, եւ դրանով նրանք հոգում էին ձմեռվա ջեռուցման խնդիրը: Վերջին 2 տարին այդ գյուղերի բնակիչներին թափուկ վառելափայտ պատրաստելու թույլտվություն տրամադրելիս առաջնահերթությունը տրվել է ընտանեկան նպաստ ստացող անապահով ընտանիքներին, եւ շատ ընտանիքների թափուկ պատրաստելու թույլտվություն չի տրվել, որոշ գյուղերում ընտանիքներին տրվել է միայն 4 խորանարդ մետր թափուկի

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 9.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՐԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԽԱՅՏԱԲՂԵՏ ԵՆ



Պատերազմների ժամանակ, սովորաբար, ժողովուրդը համախմբվում է իշխանությունների շուրջը: Իրանում բնակչության շրջանում կտրուկ աճել են հակաամերիկյան տրամադրությունները: Որքան շատ է Թրամփը սպառնում երկիրը Քարի դարի ժամանակներ մղել, այնքան ավելի քիչ են իրանցիները կարծում, թե ԱՄՆ-ն հանդես է գալիս որպես իրանցի ժողովրդի ազատարար: Նույնիսկ իրանցի վտարանդի միապետականների եւ նրանց համակիրների շրջանում այդ կարծիքը տարածում չունի: Սակայն իրանական վերնախավում կան որոշակի տարաձայնություններ, եւ դա կապված է ոչ միայն պատերազմի հանդեպ վերաբերմունքի, այլ նաեւ՝ ապագայի տեսլականի հետ: Մի կողմից բարենորոգիչներն են, որոնք հաղթել են 2024 թ. նախագահական ընտրություններում: Նրանք ցանկանում են, որ պատերազմը որքան հնարավոր է շուտ ավարտվի, որովհետեւ այն աղետալի է իրանական տնտեսության համար: Նրանք ապագան պատկերացնում են այսպես. Իրանը պատերազմն ավարտել է նվազագույն կորուստներով, կարողացել է փոխզիջում գտնել Արեւմուտքի, ներառյալ՝ նաեւ ԱՄՆ-ի հետ: Պահպանվել են հարաբերություններն արաբական միապետությունների հետ: Որ ներքաղաքական հարցերում պետք է որոշակի ազատականացում իրականացվի, այդ մասին արդեն խոսում է նախկին նախագահ Հասան Ռոհանին: Բարենորոգիչներն արտաքին քաղաքականության հարցերում կողմնակից են քաղաքակիրթ երկխոսության, որը հռչակել է առաջին բարենորոգիչ նախագահ Մոհամադ Խաթամին: Բարենորոգիչները, իհարկե, չունեն այն ուժը, ինչ պահպանողականները, սակայն նրանց «աուտսայդերներ» համարել չի կարելի: Նրանց տրամադրության տակ են նախագահի պաշտոնն ու կառավարությունը:

Իրանում նախագահի լիազորությունները, իհարկե, սահմանափակ են: Նա իր լիազորություններով մոտավորապես համարժեք է համաժողովրդական ընտրությամբ ընտրված վարչապետին: Պատերազմը դադարեցնելուն կողմնակից են ոչ միայն համալսարանական մտավորականները, այլ նաեւ՝ Թեհրանի շուկայի առեւտրականները, ընդ որում՝ ազդեցիկ վաճառականները: Իսկ դա կարեւոր գործոն է, որն անտեսել չի կարելի: Բարենորոգիչները որոշակի կապեր ունեն նաեւ ուժայինների հետ: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ղեկավարությունը դեմ եղավ, որ իշխանության վերադառնա գեներալ Հոսեյն Դեգխանը, որը նույն կորպուսի հիմնադիրներից էր, իսկ հետո զբաղեցնում էր պաշտպանության նախարարի պաշտոնը Ռոհանիի կաբինետում: Դեգխանը ղեկավարում է «Մոսթազաֆան» մեգահոլդինգը: Նա այժմ կարծես սկսել է մտերմություն անել բարենորոգիչների հետ: Ունեն կապեր նաեւ Ղում Սրբազան քաղաքի հետ, որտեղ որոշ կրոնավորներ պատրաստ չեն, որ իսլամական կրոնապետությունը վերածվի ռազմական վարչակարգի:

Մյուս կողմից, ինչպես Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն է, այնպես էլ պահպանողականների հզոր համայնքը, որը ձեւավորվել է դեռ առաջին Ռահբար Խոմեյնիի օրոք, իսկ Ալի Խամենեիի ժամանակ գրավել է առանցքային բոլոր դիրքերը: Նրանք ղեկավարում են պառլամենտը, դատարաններն ու դատախազությունը: Պահպանողականների կողքին ոստիկանությունն է եւ աշխարհազորային «բասիջիները»: Նրանք դեմ չեն, որ ուժայինների դիրքերն ուժեղանան: Եվ, իհարկե, չպետք է մոռանալ ԻՀՊԿ-ին: Այս կազմավորումը կարողացավ հասնել նրան, որ Մոջթաբա Խամենեին ընտրվեց գերագույն առաջնորդ, եւ հիմա երկիրը կառավարում են նրա անունից: ԻՀՊԿ-ում պնդում են, որ կրտսեր Խամենեին մեղսունակ է եւ աշխատունակ՝ ով հակառակը պնդի, գուցեեւ մեղադրվի դավաճանության մեջ: Պատերազմի հարցում նրանք ավելի արմատական են տրամադրված՝ Ղասեմ Սուլեյմանիի փորձից ելնելով, հասկանում են, որ եթե քաղաքական գործիչները կարողանան համաձայնության գալ, իրենք պետք է ենթարկվեն, հակառակ դեպքում կդառնան թիրախ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am